ԴԱՏԱԲԺՇԿԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

1.Գանգուղեղային վնասվածքի դեպքում ենթակարծրենային տարածություն արյունահոսության աղբյուր առավել հաճախ հանդիսանում են՝

Ա-կամրջող երակները

Բ-բազիլյար զարկերակը

Գ-միջին մենինգեալ զարկերակը

Դ-գլխուղեղի պարենխիմայի անոթները

2.Մակրոսկոպիկ հետազոտությամբ վնասվածքի առաջացման պահից ենթակարծրենային տարածությունում արյան մակարդման սկիզբը հնարավոր է որոշել՝

Ա-2–3 ժամ անց

Բ-15 ժամ անց

Գ-24 ժամվա ավարտին

Դ-72 ժամվա ավարտին

3.Նեխման ավելի արագ զարգացմանը նպաստում է՝

Ա-ֆլեգմոնան

Բ-առատ արյան կորուստը

Գ-սննդային հյուծվածությունը

Դ-թույլ արտահայտված ենթամաշկային ճարպաշերտը

4.Պտուղների և նորածինների դիակների դիահերձման ժամանակ կտրվածքը սկսում են ստորին շրթունքի միջնամասից՝ հետևյալի համար՝

Ա-օտար մարմինների որոնման

Բ-բերանի նախադռան հետազոտման

Գ-պարանոցի ավշային հանգույցների հետազոտման

Դ-մակկոկորդի և շնչափողի վերին երրորդի զննման

5.Ուղեղի փափուկ թաղանթների էրոզիվ վնասվածքները դիտվում են՝

Ա-հակահարվածի գոտում

Բ-ուժի կիրառման տեղում

Գ-ազդեցության ուղղությամբ

Դ-գանգի ոսկրերի կոտրվածքների շրջանում

6.Պտղի գլխի մեծ լայնական չափը համապատասխանում է այն հեռավորությանը, որը չափվում է՝

Ա-գագաթոսկրերի թմբկությունների միջև

Բ-ճակատային թմբկությունների միջև

Գ-քթի արմատի և ծոծրակային բլրակի միջև

Դ-մեծ գաղթունի կենտրոնի և ծոծրակային թմբկության միջև

7.Պտղի գլխի ուղիղ չափը համապատասխանում է այն հեռավորությանը, որը չափվում է՝

Ա-քթի արմատի և ծոծրակային թմբկության միջև

Բ-կզակի և ծոծրակային թմբկության միջև

Գ-քթի ծայրի և ծոծրակային թմբկության միջև

Դ-ենթածոծրակային փոսի և ծոծրակային թմբկության միջև

8.Դեցելերացիոն վնասվածքին /մարմնի կամ նրա առանձին մասերի շարժման կտրուկ դանդաղեցման կամ հանկարծակի կանգի հետևանքով առաջացած վնասվածք/ առավել բնորոշ է աորտայի վնասումը հետևյալ տեղակայմամբ՝

Ա-աղեղ

Բ-կրծքային հատված

Գ-որովայնային հատված

Դ-վայրէջ հատված

9.Կրծքավանդակի վնասվածքի դեպքում կենդանության ընթացքում առաջացած վնասվածքի /ների/ նշան է՝

Ա-ենթամաշկային էմֆիզեման

Բ-կրծոսկրի ծալումային կոտրվածքը

Գ-միջնորմային պլևրայի պատռվածքը

Դ-կողոսկրերի բեկորների ծայրերով թոքերի վնասումը

10.Քերծվածքի ձևաբանական /մորֆոլոգիական/ բնութագրերով կարելի է դատել վնասող առարկայի շարժման ուղղության մասին՝

Ա-վնասվածք առաջացնող առարկայի շարժման ուղղությունը

Բ-վնասվածք առաջացնող առարկայի նյութի քիմիական կազմը

Գ-հարձակվողի մարմնի դիրքը տուժածի նկատմամբ

Դ-վնասվածք առաջացնող առարկայի՝ մարմնի մակերևույթով շարժման արագությունը

11.Հարթ մակերեսի վրա կանգնած դիրքից՝ լրացուցիչ արագացում հաղորդելով, մեջքի վրա ընկնելու մասին կարող է վկայել գլխի մաշկամկանային լաթում արյունազեղման տեղակայումը՝

Ա-ծոծրակային թմբկությունից վերև

Բ-ծոծրակային թմբկությունից ներքև

Գ-պսակաձև թմբկությունից վերև

Դ-պսակաձև կարանից ներքև

12.Հարթ մակերեսի վրա կանգնած դիրքից՝ առանց լրացուցիչ արագացման, մեջքի վրա ընկնելու մասին կարող է վկայել արյունազեղման տեղակայումը՝

Ա-ծոծրակային բլրակի /թմբկության/ շրջանում

Բ-պարանոցի հետին մակերեսին

Գ-սրունքների հետին մակերեսին

Դ-նախաբազուկների հետին մակերեսին

13.Քերծվածքի և մակերեսային վերքի տարբերությունն է՝

Ա-առանց սպիի ապաքինումը

Բ-ապաքինման տևողությունը

Գ-արտաքին արյունահոսության առկայությունը

Դ-վնասող առարկայի շոշափող (տանգենցիալ) ազդեցությունը

14.Պտղի գլխի մեծ թեք չափը համապատասխանում է հետևյալ կետերի միջև եղած հեռավորությանը՝

Ա-կզակի և ծոծրակային բլրակի /թմբկության/ միջև

Բ-քթի արմատի և ծոծրակային բլրակի /թմբկության/ միջև

Գ-ենթածոծրակային փոսի և ծոծրակային բլրակի /թմբկության/ միջև

Դ-մեծ գաղթունի կենտրոնի և ենթածոծրակային փոսի միջև

15.Բեկլարի ոսկրացման կորիզների հետազոտության ժամանակ անհրաժեշտ է բացել՝

Ա-ազդրոսկրի ստորին էպիֆիզը

Բ-ազդրոսկրի վերին էպիֆիզը

Գ-մեծ ոլոքոսկրի ստորին էպիֆիզը

Դ-մեծ ոլոքոսկրի վերին էպիֆիզը

16.Ծեծված (ջնջխված) վերքը բնորոշվում է՝

Ա-շարակցահյուսվածքային կամրջակների առկայությամբ

Բ-հարթ, չքերծված եզրերով

Գ-չջնջխված, հարթ պատերով

Դ-վերքի մաքուր, բացված լուսանցքով

17.Դիակային ուշ երևույթների առաջացման մասին դատում են հետևյալի հայտնաբերմամբ՝

Ա-դիակային կանաչ

Բ-մկանային կարկամություն

Գ-իդիոմկանային ուռուցք

Դ-լորձաթաղանթների չորացման հատվածներ

18.Սուր կտրող եզր ունեցող սայրի միջոցով պատճառված հատած վերքի հատկանիշ է՝

Ա-մազերի հավասար կտրվածքը

Բ-չկտրված մազերի առկայությունը

Գ-մազապարկերի շրջվածությունը

Դ-գործիքի մակերեսին մազերի բեկորների առկայությունը

19.Կրաշ-սինդրոմը զարգանում է՝

Ա-ծանր առարկաներով սեղմման հետևանքով

Բ-սուր առարկաներով ազդեցության հետևանքով

Գ-բարձր ջերմաստիճանի ազդեցության հետևանքով

Դ-հեմոլիտիկ թույներով թունավորման հետևանքով

20.Ա.Ա. Սոլոխինի մեթոդով ողնաշարի հետազոտությունը նախատեսում է սղոցում՝

Ա-ձախ կողմից՝ ողերի աղեղների շրջանում

Բ-աջ կողմից՝ ողերի աղեղների շրջանում

Գ-ձախ և աջ կողմերից՝ ողերի աղեղների շրջանում

Դ-ողերի մարմինների առաջային մակերեսով՝ ամբողջ երկայնքով

21.Ավտոմեքենայի անիվի վրաերթի ժամանակ բուլյոզ էմֆիզեմայի շերտը անիվի շարժման ուղղության նկատմամբ ձևավորվում է՝

Ա-ուղղահայաց ուղղությամբ

Բ-սեղմման շերտի ընթացքի ուղղությամբ

Գ-շարժմանը հակառակ ուղղությամբ

Դ-անկյունագծով՝ 120°–160° անկյան տակ

22.Ավտովնասվածքի դեպքում լյարդի պատռվածքներ առավել հաճախ դիտվում են պառկած մարդու վրայով անիվի անցման ժամանակ, երբ նա գտնվում է՝

Ա-մեջքի վրա

Բ-փորի վրա

Գ-ձախ կողքի վրա

Դ-աջ կողքի վրա

23.Դիակի հետազոտությամբ կարելի է ենթադրել, որ զոհը ավտոտրանսպորտային միջոցի վարորդի նստատեղում է գտնվել, եթե հայտնաբերվի՝

Ա-կրծքավանդակի առաջային մակերեսի վրա աղեղնաձև քերծվածք

Բ-աջ ձեռքի ափային մակերեսի կտրած վերք

Գ-պարանոցի առաջային մակերեսի ստորին երրորդում արյունազեղում

Դ-սրունքների առաջային մակերեսին ուղիղ, հորիզոնական տեղակայված քերծվածք

24.Միոռենալ համախտանիշը զարգանում է՝

Ա-դիրքային սեղմման համախտանիշի ժամանակ

Բ-վեգետատիվ պոլինևրիտի ժամանակ

Գ-կատատոնիկ-հեբեֆրենիկ համախտանիշի ժամանակ

Դ-մեզենխիմալ-բորբոքային համախտանիշի ժամանակ

25.Ստանիսլավսկու նշանը ձևավորվում է՝

Ա-ավտոմեքենայի անիվներով վրաերթի հետևանքով

Բ-աստիճանավանդակից ընկնելու հետևանքով

Գ-պարանոցի կոշտ օղակով սեղմման հետևանքով

Դ-ցածր ջերմաստիճանի ազդեցության հետևանքով

26.Հեռու տարածությունից կրակոցի դեպքում վնասող ազդեցություն ունեն՝

Ա-հրազենային արկը

Բ-չայրված վառոդի հատիկները

Գ-հրազենային արկը և չայրված վառոդի հատիկները

Դ-հրազենային արկը, մուրը և չայրված վառոդի հատիկները

27.Ընդհուպ կրակոցի դեպքում դիտվում է՝

Ա-Տուանոյի նշանը

Բ-Վինոգրադովի նշանը

Գ-Վլադիմիրսկու նշանը

Դ-Պիրոգով-Ռայսկու նշանը

28.Հերցի կոնուսը /հատած կոնուսը/ առաջանում է գնդակի՝ հետևյալի վրա ազդեցության հետևանքով՝

Ա-հարթ ոսկրերի

Բ-խողովակավոր ոսկրերի

Գ-կոլաբացված թոքի

Դ-լցված միզապարկի

29.Շեղբի (դանակի) սայրի բութ կողմի հաստությունը առավել ճշգրիտ կարելի է որոշել՝ վնասվածքներով, որոնք հայտնաբերվում են՝

Ա-ոսկրերի և աճառների վրա

Բ-մաշկի վրա

Գ-լյարդի աջ բլթի վրա

Դ-մաշկի և դրան անմիջապես տակ գտնվող փափուկ հյուսվածքների վրա

30.Ենթալեզվային ոսկրի տարածիչ կոտրվածքը դիտվում է՝

Ա-կախման դեպքում

Բ-իսկական ջրահեղձման դեպքում

Գ-ռեֆլեկտոր ջրահեղձման դեպքում

Դ-բերանի և քթի անցքերի փակման դեպքում

31.Շոկի ախտորոշման համար հաշվարկվում է՝

Ա-Վազինայի ինդեքսը

Բ-Ֆրանկի ինդեքսը

Գ-Ալգովերի ինդեքսը

Դ-Ֆեդորով-Վոլոդկինայի ինդեքսը

32.Լյարդի ծայրամասային դեղին նեկրոզները բնորոշ են հետևյալ նյութով թունավորմանը՝

Ա-ֆոսֆորով

Բ-մեթանոլով

Գ-քլորոֆորմով

Դ-ցիտոստատիկներով

33.Ծննդաբերական վնասվածքի առավել հաճախ հանդիպող ձևն է՝

Ա-ենթակարծրենային հեմատոման
Բ-էպիդուրալ հեմատոման
Գ-սուբարախնոիդալ արյունազեղումը
Դ-ներգանգային փորոքային արյունազեղումը

34.Գերարյունություն առանց լյարդի ծավալի մեծացման դիտվում է՝

Ա-պելիոզային հեպատիտի դեպքում
Բ-ճարպային հեպատոզի դեպքում
Գ-ալկոհոլային ցիրոզի դեպքում
Դ-քրոնիկական երակային կանգի դեպքում

35.Ալկոհոլի օգտագործման մասին վկայող նշաններից է՝

Ա-տասներկումատնյա աղու պարունակության գունատությունը
Բ-տասներկումատնյա աղու պարունակության բացակայությունը
Գ-սննդային զանգվածներով լցված տասներկումատնյա աղին
Դ-լեղով ինտենսիվ գունավորված տասներկումատնյա աղու պարունակությունը

36.«Բռնցքամարտիկի դիրք» դիակը ընդունում է՝

Ա-բարձր ջերմաստիճանի ազդեցության դեպքում
Բ-ցածր ջերմաստիճանի ազդեցության դեպքում
Գ-մթնոլորտային ցածր ճնշման դեպքում
Դ-մթնոլորտային բարձր ճնշման դեպքում

37.Թոքերի այտուցը, որն ուղեկցվում է արտահայտված հիպերեմիայով, բնորոշ է՝

Ա-քիմիական վնասվածքին
Բ-ջերմային վնասվածքին
Գ-մեխանիկական վնասվածքին
Դ-էլեկտրական վնասվածքին

38.Ամոնիակով շնչուղիների ախտահարման դեպքում հայտնաբերվում է՝

Ա-նեկրոտիկ տրախեիտ և բրոնխիտ
Բ-թոքերում բազմաթիվ ինֆարկտներ
Գ-թոքային զարկերակի խոշոր ճյուղերի թրոմբոէմբոլիա
Դ-շնչափողում սև գույնի բազմաթիվ նեկրոզի օջախներ

39.Ծծմբի երկօքսիդով շնչուղիների ախտահարման դեպքում հայտնաբերվում է՝

Ա-թոքերի հարարմատային գոտիների հեմոռագիկ այտուց
Բ-երկու թոքերի հյուսվածքում բազմաթիվ ինֆարկտներ
Գ-թոքային զարկերակի խոշոր ճյուղերի թրոմբոէմբոլիա
Դ-շնչափողում սև գույնի բազմաթիվ նեկրոզի օջախներ

40.Մաքուր թթվածնով շնչուղիների ախտահարման դեպքում դիտվում է՝

Ա-թոքերի հեմոռագիկ այտուց
Բ-երկկողմանի պնևմոսկլերոզ
Գ-թոքային զարկերակի խոշոր ճյուղերի թրոմբոէմբոլիա
Դ-շնչափողում սև գույնի բազմաթիվ նեկրոզի օջախներ

41.Մկաններում արյան կուտակումը կոչվում է՝

Ա-հեմատոմա

Բ-աբսցես

Գ-ֆլեգմոնա

Դ-արյունազեղում

42.Օրգանիզմի ընդհանուր գերտաքացումից մահվան դեպքում հայտնաբերվում է՝

Ա-արյան ռեոլոգիական /արյան հոսունության/ հատկությունների խանգարում

Բ-գանգի ծածկի ոսկրերի սագիտալ կարի բացում

Գ-ողնուղեղում փափկացման բազմաթիվ հատվածներ

Դ-պարենխիմատոզ օրգանների ծավալի փոքրացում և դրանց «չորացում»

43.Նորածինների և պտուղների դիահերձման ժամանակ թոքերի երկրորդային ատելեկտազը որոշելու համար կատարվում է՝

Ա-Տարանուխինի փորձը

Բ-Բուշու-Գաբերդիի փորձը

Գ-Վլադիմիրսկու փորձը

Դ-Գալեն-Շրեյերի փորձը

44.Նորածինների մոտ ենթակարծրենային հեմատոմայի առավել հաճախակի պատճառը հանդիսանում է՝

Ա-ուղեղիկի վրանի վնասումը

Բ-լայնական կամրջող երակների վնասումը

Գ-Վիլիզյան շրջանի պարկաձև անևրիզմայի վնասումը

Դ-փափուկ ուղեղաթաղանթի միջին զարկերակի վնասումը

45.Դիակից կենսաքիմիական հետազոտության համար արյունը մահվան պահից անհրաժեշտ է վերցնել՝

Ա-1 օրվա ընթացքում

Բ-3 օրվա ընթացքում

Գ-6 օրվա ընթացքում

Դ-9 օրվա ընթացքում

46.Պտուղների և նորածինների դիակների գանգի խոռոչը բացելիս կիրառվում է՝

Ա-Ֆիշերի մեթոդը

Բ-անկյունաձև սղոցում

Գ-համակցված անկյունային սղոցում

Դ-Կալիտեևսկու աստիճանաձև սղոցումը

47.Դիահերձումը սկսում են Սումցովի փորձի կատարումով՝ կտրած վերքի առկայության դեպքում՝

Ա-պարանոցի վրա

Բ-որովայնի վրա

Գ-ուսի արտաքին մակերեսին

Դ-ազդրի արտաքին մակերեսին

48.Թռիչքի բարձր արագությունների դեպքում դիմահար օդային հոսքի պատճառած վնասվածքները նման են հետևյալի ազդեցությունից առաջացած վնասվածքներին՝

Ա-կարծր բութ առարկայի

Բ-հատող առարկայի

Գ-ցածր ջերմաստիճանի ազդեցության

Դ-բարձր ջերմաստիճանի ազդեցության

49.Պարանոցի առաջային մակերեսի շրջանին նախորդող հարվածով՝ հանկարծամահության դեպքում արյունազեղումներ անհրաժեշտ է փնտրել՝

Ա-քնային սինուսի շրջանում

Բ-պսակային սինուսի շրջանում

Գ-սիգմայաձև սինուսի շրջանում

Դ-ստորին սագիտալ սինուսի շրջանում

50.Նորածինների ջրահեղձման դեպքում բացակայում է՝

Ա-Սվեշնիկովի նշանը

Բ-Պալտաուֆի նշանը

Գ-Ֆեգերլունդի նշանը

Դ-Կրուշևսկու նշանը

51.Կոնկրետ դեպքում դիահերձման մեթոդը, ծավալը և եղանակը որոշում է՝

Ա-դատաբժշկական փորձագետը

Բ-փորձագիտական հաստատության ղեկավարը

Գ-տանատոլոգիական բաժանմունքի վարիչը

Դ-դատաբժշկական փորձաքննություն նշանակած անձը

52.Բռնի մահվան դեպքերում հուղարկավորումը թույլատրվում է միայն հետևյալի գրավոր թույլտվությամբ՝

Ա-վարույթն իրականացնող մարմինների

Բ-մահացածի մերձավոր հարազատների

Գ-փորձագիտական հաստատության ղեկավարի

Դ-դիահերձումն իրականացրած դատաբժշկական փորձագետի

53.Դիակից հյուսվածաբանական հետազոտության համար վերցված օրգանների կտորները անհրաժեշտ է՝

Ա-տեղադրել չեզոք ֆորմալինի մեջ

Բ-տեղադրել ֆորմալդեհիդի թթվային լուծույթի մեջ

Գ-չորացնել՝ նախքան կոնսերվացնող հեղուկի մեջ տեղադրելը

Դ-լվանալ հոսող ջրով՝ նախքան կոնսերվացնող հեղուկի մեջ տեղադրելը

54.Յուրաքանչյուր օրգանի առանձին հեռացումը կատարվում է դիահերձման ժամանակ՝

Ա-Վիրխովի մեթոդով

Բ-Լյուտելի մեթոդով

Գ-Աբրիկոսովի մեթոդով

Դ-Կիարի-Մարիշի մեթոդով

55.Օրգանների հեռացումը 5 համալիրով կատարվում է դիահերձման ժամանակ՝

Ա-Աբրիկոսովի մեթոդով

Բ-Լյուտելի մեթոդով

Գ-Վիրխովի մեթոդով

Դ-Կիարի-Մարիշի մեթոդով

56.Դիակի դատաբժշկական փորձաքննության ավարտից հետո հագուստի հանձնումն իրականացվում է՝

Ա-վարույթն իրականացնող մարմինների գրավոր թույլտվությամբ

Բ-մերձավոր հարազատների գրավոր պահանջով

Գ-դիահերձումն իրականացրած փորձագետի գրավոր թույլտվությամբ

Դ-փորձագիտական հաստատության ղեկավարի գրավոր թույլտվությամբ

57.Դիակում օրգանների՝ դրանց գտնվելու տեղում բացումը կատարվում է դիահերձման ժամանակ՝

Ա-Կիարի-Մարիշի մեթոդով

Բ-Լյուտելի մեթոդով

Գ-Վիրխովի մեթոդով

Դ-Աբրիկոսովի մեթոդով

58.Հեմոլիզ առաջացնում է հետևյալ թթվով թունավորումը՝

Ա-քացախաթթվով

Բ-սադաթթվով, սուկցինաթթու /succinic acid/

Գ-աղաթթվով

Դ-օրթոֆոսֆորական թթվով

59.Տեխնիկական էլեկտրական հոսանքով ախտահարման դեպքում մաշկում կարող են ձևավորվել՝

Ա-բջջախորշանման (մեղրահացանման) դատարկություններ

Բ-«մարգարտե ուլունքներ»

Գ-հեմոռագիկ լակունաներ

Դ-կոլիկվացիոն նեկրոզի օջախներ

60.Գլիկոզիդներով թունավորման դեպքում դիակից վերցված հյուսվածքները կոնսերվացնում են՝

Ա-էթանոլում

Բ-գլիցերինում

Գ-ֆորմալինում

Դ-աղաթթվում

61.Հանկարծամահության դեպքում, երբ արտաքին բռնի մահվան նշաններ չկան, օդային էմբոլիայի փորձով դիահերձումը պետք է սկսել՝

Ա-երիտասարդ կնոջ դիակի հետազոտման ժամանակ

Բ-տարեց կնոջ դիակի հետազոտման ժամանակ

Գ-երիտասարդ տղամարդու դիակի հետազոտման ժամանակ

Դ-տարեց տղամարդու դիակի հետազոտման ժամանակ

62.Ցնդող քլորօրգանական նյութերով թունավորման դեպքում դատաքիմիական հետազոտության համար վերցնում են՝

Ա-ճարպոնը (օմենտումը), գլխուղեղը

Բ-ըմպանը, շնչափողը և կերակրափողը

Գ-մազերը, եղունգները և հարթ ոսկրերը

Դ-լյարդի հատվածը՝ չբացված լեղապարկով

63.Մեթիլ սպիրտով թունավորման դեպքում դատաքիմիական հետազոտության համար վերցնում են՝

Ա-գլխուղեղը

Բ-հարթ ոսկրերը

Գ-հաստ աղին

Դ-ապակենման մարմինը

64.Ածխածնի մոնօքսիդով թունավորման դեպքում դատաքիմիական հետազոտության համար վերցնում են՝

Ա-արյունը, մկանային հյուսվածքը

Բ-ըմպանը, շնչափողը և կերակրափողը

Գ-ողնուղեղային հեղուկը

Դ-գլխուղեղի մեկ երրորդը

65.Դեկոմպրեսիոն հիվանդության ուշ բարդությունների ձևաբանական դրսևորումներից է՝

Ա-ողնուղեղի փափկացման օջախները

Բ-լյարդի հարպորտալ գոտու նեկրոզի օջախները

Գ-փայծաղի բազմակի ենթապատիճային պատռվածքները

Դ-մկանային տիպի զարկերակներում բազմակի թրոմբերը

66.Դեկոմպրեսիոն հիվանդության դեպքում զարկերակային գազային էմբոլիայի հավաստի չափանիշ է հայտնաբերումը՝

Ա-անոթային հյուսակների մազանոթներում գազի

Բ-տարածուն, մուգ կարմիր գույնի դիակային բծերի

Գ-անոթային հյուսակների զարկերակիկներում թթվածնի

Դ-գլխուղեղի ցողունի սեպման դեպի մեծ ծոծրակային անցք

67.Բարոտրավմայի դեպքում թոքային հյուսվածքի պատռվածքները հայտնաբերում են՝

Ա-սիրտ-թոքային կոմպլեքսի մեջ օդ ներփչելով

Բ-էվիսցերացիայից առաջ թոքային հյուսվածքը ձեռքերով սեղմելով

Գ-գանգի խոռոչը բացելուց առաջ Սումցովի փորձը կատարելով

Դ-թոքերի և ստամոքս-աղիքային համակարգի լողացման փորձը կատարելով

68.Գլխի և պարանոցի ծավալի կտրուկ մեծացումը և դրանց ցիանոզը բնորոշ են՝

Ա-ջրասուզակի «սեղմմանը» /մամլումը/

Բ-թոքերի բարոտրավմային

Գ-դեկոմպրեսիոն հիվանդությանը

Դ-իզոբարիկ հակադիֆուզիայի համախտանիշին

69.Թունավորման կասկածի դեպքում վերցված օրգանները տեղադրում են՝

Ա-ապակյա տարայի մեջ

Բ-կերամիկական տարայի մեջ

Գ-ալյումինե տարայի մեջ

Դ-չժանգոտվող պողպատից տարայի մեջ

70.Տրանսպորտային վնասվածքից մահացած անձի դիակի հետազոտության ժամանակ անհրաժեշտ է բացել՝

Ա-վերջույթները

Բ-պսակային սինուսը

Գ-միջընդերային զարկերակները

Դ-սեպոսկրային սինուսը

71.Գլիկոգենի ներկման համար դիահերձման ժամանակ վերցված օրգանների կտորները ֆիքսում են՝

Ա-էթանոլում

Բ-ֆորմալինում

Գ-Բուենի խառնուրդում

Դ-աղաթթվում

72.Էթիլ սպիրտով թունավորման դեպքում փափուկ ուղեղաթաղանթները լինում են՝

Ա-այտուցված, խամրած, լիարյուն

Բ-չոր, փայլուն, սակավարյուն

Գ-ճակատային բլթերի պրոյեկցիայում մանր էրոզիաներով

Դ-ամբողջ մակերեսով շճաֆիբրինային էքսուդատով

73.Էթիլսպիրտով թունավորման կասկածի դեպքում անհրաժեշտ է արյան և/կամ մեզի կենսաքիմիական հետազոտություն կատարել՝

Ա-գլյուկոզի

Բ-կալցիտրիոլի

Գ-խոլինէսթերազի

Դ-միելոպերօքսիդազի նկատմամբ

74.Կրյուկովի բծերը առաջանում են՝

Ա-մեթիլ սպիրտով թունավորման դեպքում

Բ-էթիլ սպիրտով թունավորման դեպքում

Գ-մրջնաթթվային սպիրտով թունավորման դեպքում

Դ-իզոբուտիլ սպիրտով թունավորման դեպքում

75.Պուպպեի նշանը թույլ է տալիս դատել վնասվածքների պատճառման՝

Ա-հաջորդականության մասին

Բ-կենդանության ընթացքում առաջացման մասին

Գ-տեղակայման մասին

Դ-վաղեմության մասին

76.Ծակած-կտրած վերքի հետազոտությունը կատարվում է՝

Ա-կիսալուսնաձև կտրվածքների մեթոդով

Բ-խաչաձև կտրվածքների մեթոդով

Գ-զիգզագաձև կտրվածքների մեթոդով

Դ-աստղաձև կտրվածքների մեթոդով

77.Ծակած-կտրած վերքի դատաբժշկական նշանակությունը կայանում է՝

Ա-գործիքի տեսակի որոշման մեջ

Բ-սայրի ամրության որոշման մեջ

Գ-հարվածային ազդեցության ուժի որոշման մեջ

Դ-ազդեցության տևողության որոշման մեջ

78.Պրոկոպի փորձով գնահատում են՝

Ա-մկանաթելերի տեղային կծկումը

Բ-դիակի լյարդում գլիկոգենի և շաքարի քանակը

Գ-սեպոսկրային սինուսում ջրահեղձման միջավայրի առկայությունը

Դ-սրտի խոռոչներից վերցված արյան մակարդուկներում օդային պղպջակների առկայությունը

79.Առաջնային ներբնային (ներգանգային ցողունային) արյունազեղումները բնութագրվում են՝

Ա-հստակ սահմաններով

Բ-պոլիմորֆիզմով

Գ-աղոտ սահմաններով

Դ-անկանոն դասավորությամբ

80.Առաջնային հարվածի պահին առաջացած և հարվածի տեղում տեղակայված վնասվածքները կոչվում են՝

Ա-առաջնային ուղղակի

Բ-երկրորդային ուղղակի

Գ-առաջնային անուղղակի

Դ-երկրորդային անուղղակի

81.Առաջնային հարվածի պահին առաջացած, սակայն ազդեցության տեղից հեռու տեղակայված վնասվածքները կոչվում են՝

Ա-առաջնային անուղղակի

Բ-երկրորդային անուղղակի

Գ-առաջնային հեռավոր

Դ-երկրորդային հեռավոր

82.Առաջնային ներբնային արյունազեղումները բնութագրվում են՝

Ա-փոքր չափերով

Բ-մեծ չափերով

Գ-անկանոն դասավորությամբ

Դ-շրջակա հյուսվածքի հետ սահմանների աղոտությամբ

83.Վերքի ապաքինման արդյունքն է՝

Ա-սպին

Բ-արյունազեղումը

Գ-ինտակտ մաշկը

Դ-հիպերպիգմենտացիայով մաշկի հատվածը

84.Առաջնային ներբնային արյունազեղումները բնութագրվում են՝

Ա-սահմանափակ հատվածում տեղակայմամբ

Բ-բազմակի տեղակայմամբ՝ միայն կամրջի սահմաններում

Գ-բազմակի տեղակայմամբ՝ ընդարձակ հատվածներում

Դ-անկանոն տեղակայմամբ՝ միայն երկարավուն ուղեղում

85.Բարձրությունից ընկնելու դեպքում հորիզոնական վայրէջքի ժամանակ հայտնաբերվում են՝

Ա-ուժի կիրառման տեղում վնասվածքներ

Բ-ազդրոսկրերի պարուրաձև կոտրվածքներ

Գ-մարմնի պտտման նշաններ սագիտալ առանցքի շուրջ

Դ-մարմնի պտտման նշաններ հորիզոնական առանցքի շուրջ

86.Հրազենային վնասվածքի դեպքում այրումը առաջացնում է՝

Ա-վառոդի հատիկները

Բ-գնդակից առաջացած օդային հոսանքը

Գ-փողի դնչային կտրվածքը

Դ-հրազենային արկը

87.Սրտամկանի ինֆարկտի գոտին ֆիբրոզ սպիով փոխարինվում է՝

Ա-3–4 ամսում

Բ-3–4 օրում

Գ-3–4 շաբաթում

Դ-36–48 ժամում

88.Հրազենային գնդակի ներգործությունից քայքայված պատնեշի բեկորները հանդիսանում են՝

Ա-երկրորդային արկեր

Բ-առաջնային արկեր

Գ-տիպիկ արկեր

Դ-ատիպիկ արկեր

89.Նեխման սկզբնական նշանների առկայության մասին վկայում է՝

Ա-ակնագնդի ներակնային հեղուկում օդային պղպջակների առկայությունը

Բ-բազկի մկաններում իդիոմկանային ուռուցիկության բացակայությունը

Գ-բոլոր մկանախմբերում արտահայտված դիակային կարկամության առկայությունը

Դ-ուղիղ աղիքում և շրջակա միջավայրում ջերմաստիճանի հավասար ցուցանիշը

90.Սրտամկանի սուր ինֆարկտից հետո ձախ փորոքի պատի պատռումը սովորաբար տեղի է ունենում ___ օրերին

Ա-3–7

Բ-1–2

Գ-14–18

Դ-20–30

91.Թոքերի ճարպային էմբոլիայի կասկածի դեպքում հյուսվածաբանական հետազոտության համար խորհուրդ է տրվում վերցնել

Ա-10 կտոր թոքերի տարբեր հատվածներից

Բ-2 կտոր՝ երկու թոքերի հարմատային գոտուց

Գ-3 կտոր՝ թոքերի ստորին և միջին բլթերից

Դ-3 կտոր՝ թոքերի վերին և միջին բլթերից

92.Հրազենային վերքային խողովակների հետազոտությունը՝ խորությունն ու ուղղությունը որոշելու նպատակով, կատարվում է

Ա-շերտ առ շերտ բացազատելով

Բ-վերքային խողովակը հատելով

Գ-փայտե զոնդերի օգնությամբ

Դ-մետաղական զոնդերի օգնությամբ

93.Բազմակի հրազենային գնդակային վնասվածքներով դիահերձման հետազոտության ժամանակ՝

Ա-բոլոր արկերը հեռացնելը պարտադիր է

Բ-բոլոր արկերը հեռացնելը պարտադիր չէ

Գ-անհրաժեշտ է հեռացնել առնվազն 1 արկ

Դ-անհրաժեշտ է հեռացնել հնարավորինս մեծ թվով արկեր

94.Ոչ տիպիկ արկերին է վերաբերում

Ա-աղը

Բ-գնդակը

Գ-մանրագնդակը

Դ-խոշորագնդակը

95.Հերցի կոնը իրենից ներկայացնում է լրացուցիչ վնասվածք՝

Ա-արտաքին կոմպակտ նյութի

Բ-հիալինային աճառի

Գ-սպունգանման նյութի

Դ-ներքին կոմպակտ նյութի

96.Հատած մետաղալարը հանդիսանում է ___ արկ

Ա-ոչ տիպիկ

Բ-երկրորդային

Գ-ստանդարտ

Դ-հատուկ

97.Կրծքավանդակի վերքերի հաջորդականության որոշումը կատարվում է ___ նշանի հիման վրա

Ա-Դեմենչակի

Բ-Սաբինսկու

Գ-Նիկիֆորով–Շավինիի

Դ-Ռասսկազով–Լուկոմսկի–Պալտաուֆի

98.Միակ ներթափանցող թորակոաբդոմինալ հրազենային գնդակային վնասվածքը հանդիսանում է՝

Ա-մեկ համակցված

Բ-մեկ մեկուսացված

Գ-բազմակի համակցված

Դ-բազմակի մեկուսացված

99.Սրտի կոնտուզիան և մարմնի մակերեսի 30% III աստիճանի այրվածքները հանդիսանում են ___ վնասվածք՝

Ա-համակցված

Բ-բազմակի

Գ-միաժամանակյա համակցված

Դ-մեկուսացված բազմակի

100.Գասփինգ /հևոց/-շնչառությունը ձևավորվում է ___ փուլում

Ա-տերմինալ շնչական շարժումների

Բ-էքսպիրատոր հևոցի

Գ-ինսպիրատոր հևոցի

Դ-շնչառության կարճատև դադարի

101.Ստրանգուլյացիոն ասֆիքսիայի առավել հաճախ հանդիպող տեսակը՝

Ա-կախում

Բ-օղակով խեղդում

Գ-ձեռքերով խեղդում

Դ-բերանի և քթի փակմամբ

102.Ըստ օղակի կառուցվածքի՝ օղակները բաժանվում են՝

Ա-կրկնակի

Բ-կոշտ

Գ-լայն

Դ-կիսակոշտ

103.Հանգույցը բացակայում է ___ օղակի դեպքում

Ա-բաց

Բ-փակ

Գ-սահող

Դ-բազմակի

104.Ձայնախլացուցիչ սարք չունեցող զենքից կիպ հպումով կրակոցի բնորոշ նշանն է՝

Ա-վերքի մեջ վառոդի հատիկների և մրի առկայությունը

Բ-ենթամաշկային գրպանների բացակայությունը

Գ-կրակոցի երկրորդային գործոնների ազդեցության նշանների բացակայությունը

Դ-մուտքային անցքի չափը զգալիորեն փոքր է գնդակի տրամագծից

105.Մեխանիկական շնչահեղձության առաջին փուլը ___ փուլն է

Ա-ինսպիրատոր հևոցի

Բ-էքսպիրատոր հևոցի

Գ-տերմինալ շնչառության

Դ-շնչառության կարճատև դադարի

106.Մեխանիկական շնչահեղձության երկրորդ փուլը ___ փուլն է

Ա-էքսպիրատոր հևոցի

Բ-ինսպիրատոր հևոցի

Գ-տերմինալ շնչառության

Դ-շնչառության կարճատև դադարի

107.Մարմնի սեղմման հետևանքով ամբոխի կողմից ձևավորվում է ___ շնչահեղձություն

Ա-կոմպրեսիոն

Բ-օբտուրացիոն

Գ-ստրանգուլյացիոն

Դ-շնչուղիների լուսանցքի փակման հետևանքով

108.Մեխանիկական շնչահեղձության չորրորդ փուլը ___ փուլն է

Ա-տերմինալ շնչառության

Բ-էքսպիրատոր հևոցի

Գ-ինսպիրատոր հևոցի

Դ-շնչառության կարճատև դադարի

109.Միջողնային սկավառակների մեջ արյունազեղում դիտվում է՝

Ա-կախման դեպքում

Բ-ձեռքերով խեղդման դեպքում

Գ-իսկական ջրահեղձման դեպքում

Դ-կրծքավանդակի և որովայնի սեղմման դեպքում

110.Կախման նմանակման մասին վկայում է

Ա-կեղտոտ օղի պայմաններում մաքուր ձեռքերի հայտնաբերումը

Բ-օղի նյութի և սեղմված մատների միջև հետքերի առկայությունը

Գ-բազմաթիվ ստրանգուլյացիոն ակոսների առկայությունը

Դ-թեք-վերել ստրանգուլյացիոն ակոսի առկայությունը

111.Կախման դեպքում դիտվում է

Ա-անիզոկորիա

Բ-թոքերի կոլապս

Գ-արյունազեղում միջընդերքում

Դ-ձախ փորոքի սուր դիլատացիա

112.Մահն ավելի արագ է վրա հասնում ջրահեղձման դեպքում՝

Ա-տաք ջրում (26°C)

Բ-քաղցրահամ ջրում (15°C)

Գ-ծովային ջրում (15°C)

Դ-սառը ջրում (15°C-ից ցածր)

113.Կենդանության ընթացքում ձեռքով խեղդման դեպքում կարելի է հայտնաբերել՝

Ա-արյունազեղումներ ձայնալարերում

Բ-թիթեղանման էպիդուրալ հեմատոմա

Գ-վարդագույն, տարածուն դիակային բծեր

Դ-գլխուղեղի անոթներում բազմաթիվ ճարպային էմբոլներ

114.Գերսառեցումից մահվան առաջացման ընթացքում արյան մեջ էթիլ սպիրտի կոնցենտրացիան՝

Ա-նվազում է

Բ-բարձրանում է

Գ-չի փոփոխվում

Դ-փոփոխվում է քաոտիկ կերպով

115.Պարանոցի սառչելուց, ապա գլխի սառչելուց հետո դիահերձման ժամանակ կարելի է հայտնաբերել

Ա-գանգի կարանների տարանջատում

Բ-էքխիմոտիկ դիմակ

Գ-գլխուղեղի փորոքային համակարգում արյան կուտակում

Դ-պահպանված գանգի ոսկրերի ամբողջականության պայմաններում երկարավուն ուղեղի ներհրում մեծ ծոծրակային անցք

116.Փափուկ հյուսվածքների և ոսկրերի նեկրոզը ձևավորվում է ___ աստիճանի ցրտահարության դեպքում

Ա-IV

Բ-III

Գ-II

Դ-I

117.Հրդեհի օջախում կենդանության ընթացքում գտնվելու մասին կարող է վկայել

Ա-արյան մեջ կարբօքսիհեմոգլոբինի հայտնաբերումը

Բ-սուր ենթակարծրենային հեմատոման

Գ-գանգի ոսկրերի ամբողջականության խախտումը

Դ-վերջույթների ծալված դիրքում ֆիքսված լինելը

118.Հրդեհի օջախում կենդանության ընթացքում գտնվելու մասին վկայում է

Ա-բրոնխներում մրի հայտնաբերումը

Բ-մաշկի վրա պերգամենտային բծերը

Գ-հոդերի շրջանում մաշկի պատռվածքները

Դ-վերջույթների ծալված դիրքում ֆիքսված լինելը

119.Օրգանիզմի գերտաքացմանը նպաստում է

Ա-բարձր խոնավությունը

Բ-առատ հեղուկի ընդունումը

Գ-ցածր խոնավությունը

Դ-ֆիզիկական ծանրաբեռնվածության բացակայությունը

120.Այրվածքի մակերեսը որոշելիս կիրառվում է

Ա-ինների կանոնը

Բ-տասնյակների կանոնը

Գ-հնգյակների կանոնը

Դ-ությակների կանոնը

121.Դիակային բծերը ցածրջերմաստիճանային վնասվածքների դեպքում բնութագրվում են՝

Ա-ուշ առաջացմամբ

Բ-սովորական ժամկետում առաջացմամբ

Գ-զգալիորեն ավելի վաղ առաջացմամբ

Դ-տաք տարածք տեղափոխելուց առաջ դրանց բացակայությամբ

122.Գանգի ոսկրերի տարանջատումը, որն անցնում է սագիտալ և պսակաձև կարերով, արտաքին և ներքին ոսկրային թիթեղիկների ուղղաձիգ եզրերով, առաջանում է

Ա-գանգի սառչելու հետևանքով

Բ-բարձր ջերմաստիճանի ազդեցությունից

Գ-կարծր բութ առարկայի հարվածից

Դ-կանգնած դիրքից հարթության վրա ընկնելու հետևանքով

123.Մահվան հավաստի նշաններին է վերաբերում

Ա-դիակային փայտացումը

Բ-ցրտահարությունը

Գ-շնչառության բացակայությունը

Դ-սրտի աշխատանքի բացակայությունը

124.Բուն դիակային փոփոխություններին է վերաբերում

Ա-սառեցումը

Բ-սառցակալումը

Գ-մումիֆիկացումը

Դ-սապոնաֆիկացումը

125.Ջերմային փայտացումը /կարկամությունը/ ձևավորվում է

Ա-բարձր ջերմաստիճանի ազդեցության հետևանքով

Բ-օրգանիզմի ընդհանուր գերտաքացման հետևանքով

Գ-տաք ջրում մահվան առաջացման հետևանքով

Դ-արևի ճառագայթների անմիջական ազդեցության հետևանքով

126.Ջերմային փայտացման դեպքում ձևավորվում է

Ա-«բռնցքամարտիկի» դիրք

Բ-«ձգանի» դիրք

Գ-սաղմի դիրք

Դ-«որսորդական շան» դիրք

127.Ջերմային փայտացումը /կարկամությունը/ ձևավորվում է

Ա-սպիտակուցի կոագուլյացիայի հետևանքով

Բ-ճարպային հյուսվածքի լիպոլիզի հետևանքով

Գ-շարակցական հյուսվածքի սկլերոզի հետևանքով

Դ-վեգետատիվ կարգավորման խանգարման հետևանքով

128.Պրոզորովսկու նշանը որոշվում է

Ա-հրազենային վնասվածքի դեպքում

Բ-քաղցրահամ ջրում ջրահեղձման դեպքում

Գ-բերանի և քթի փակման դեպքում

Դ-ցածր ջերմաստիճանի ազդեցության դեպքում

129.Ամենամեծ էլեկտրահաղորդականությամբ օժտված է

Ա-լիկվորը

Բ-մեծ ճարպոն (օմենտում)

Գ-ոսկրային հյուսվածքը

Դ-ճարպային հյուսվածքը

130.Երկար խողովակավոր ոսկրի կոտրվածքի դեպքում դատաբժշկական-քրեագիտական հետազոտության համար անհրաժեշտ է վերցնել

Ա-ամբողջ ոսկորը

Բ-դիստալ բեկորը

Գ-սղոցված հատվածը

Դ-պրոքսիմալ բեկորը

131.Սվեշնիկովի ախտանիշը /նշանը/ հայտնաբերելու համար անհրաժեշտ է հետազոտել

Ա-սեպոսկրային ծոցը

Բ-պտկաձև ելուների խորշերը

Գ-ըմպանի հետևի տարածության բջջանքը

Դ-գլխուղեղի բազալ մակերեսը

132.Ամենամեծ էլեկտրահաղորդականությամբ օժտված է

Ա-արյունը

Բ-մաշկը

Գ-ոսկրային հյուսվածքը

Դ-ճարպային հյուսվածքը

133.Սրտի փականների ֆունկցիոնալ վիճակը գնահատվում է ___ փորձով

Ա-Ֆինգերլանդի

Բ-Վլադիմիրսկու

Գ-Սվեշնիկով–Իսաևի

Դ-Մագնուս–Ռիչարդսոնի

134.Ամենափոքր էլեկտրահաղորդականությամբ օժտված է

Ա-մաշկը

Բ-արյունը

Գ-լիկվորը

Դ-կմախքային մկանը

135.ՄԻԱՎ վարակով հիվանդի կերակրափողի ցիտոմեգալովիրուսային ախտահարման դեպքում հայտնաբերվում են ___ էրոզիաներ

Ա-գծային

Բ-օղակաձև

Գ-պարուրաձև

Դ-խառնարանաձև

136.Ոսկորը դատաբժշկական-քրեագիտական հետազոտության ուղարկելուց առաջ անհրաժեշտ է

Ա-մեխանիկական եղանակով մաքրել

Բ-մշակել ջերմային եղանակով

Գ-տեղադրել 6% ջրածնի պերօքսիդի լուծույթի մեջ

Դ-տեղադրել չեզոք ֆորմալինի լուծույթի մեջ

137.Ֆուլգուրիտները ձևավորվում են

Ա-մթնոլորտային էլեկտրականության ազդեցության հետևանքով

Բ-կարծր բութ առարկայի ազդեցությունից

Գ-ծակող-կտրող առարկայի ազդեցությունից

Դ-բարոմետրիկ ճնշման ազդեցությունից

138.Լեռնային հիվանդությունը զարգանում է

Ա-մթնոլորտային ճնշման նվազման պայմաններում

Բ-օդի խոնավության նվազման պայմաններում

Գ-օդի խոնավության բարձրացման պայմաններում

Դ-մթնոլորտային ճնշման բարձրացման պայմաններում

139.Դեկոմպրեսիոն խանգարումները առաջանում են թռչող սարքերի հերմետիկության խախտման դեպքում՝ ___ բարձրության վրա

Ա-6000–8000 մ

Բ-4000–2000 մ

Գ-2000–1500 մ

Դ-1000–500 մ

140.Հեղուկ միջավայրերից գազերի խառնուրդի անջատումը տեղի է ունենում բարոմետրիկ ճնշման մինչև ___ մմ սնդ. ս. և ավելի ցածր նվազման դեպքում

Ա-45

Բ-55

Գ-65

Դ-75

141.Սուր ճառագայթային հիվանդությունը զարգանում է ամբողջ մարմնի հավասարաչափ ճառագայթահարման դեպքում՝ ոչ պակաս, քան ___ Գր դոզայով

Ա-1–2

Բ-3–4

Գ-4–5

Դ-6–7

142.Սուր ճառագայթային հիվանդության ընթացքում առանձնացվում է ծանրության ___ աստիճան

Ա-4

Բ-5

Գ-3

Դ-2

143.Սուր ճառագայթային հիվանդության կլինիկական դրսևորումների զարգացումը ներառում է ___ փուլ

Ա-4

Բ-3

Գ-2

Դ-5

144.Սուր ճառագայթային հիվանդության պաթոմորֆոլոգիական դրսևորումների զարգացումը ներառում է ___ փուլ

Ա-4

Բ-3

Գ-2

Դ-5

145.Ճառագայթային հիվանդությունից մահացած մարդկանց դիակների հուղարկավորությունն իրականացվում է

Ա-հատուկ վայրերում

Բ-հանրային գերեզմանատներում

Գ-դիակիզումից հետո՝ կոլումբարիումներում

Դ-ստորջրյա թաղման վայրերում

146.Մահացու սինթեզի թույներով թունավորման դեպքում ֆիզիկական ծանրաբեռնվածությունը թունավոր նյութերի առաջացումը

Ա-արագացնում է

Բ-դանդաղեցնում է

Գ-չի փոխում

Դ-կանխում է

147.«Փայտային սպիրտ» է կոչվում ___ սպիրտը

Ա-մեթիլ

Բ-բութիլ

Գ-պրոպիլ

Դ-իզոամիլ

148.Ձևավորված թմրամոլության մասին վկայում է նյութերի մշտական ընդունման նկատմամբ անդիմադրելի ձգտումը՝

Ա-հոգեմետ նյութերի

Բ-թմրամիջոցների

Գ-ալկալոիդների խմբի նյութերի

Դ-ամֆետամինի ածանցյալների

149.Սննդային թունավորումները հանդիսանում են հիվանդություններ

Ա-ոչ վարակիչ

Բ-վարակիչ

Գ-քիչ վարակիչ

Դ-խիստ վարակիչ

150.Սննդային թունավորումները զարգանում են հետևյալը օգտագործելիս

Ա-սունկ

Բ-էթանոլ

Գ-սննդային ալերգեններ

Դ-դիտավորյալ թունավորված սննդամթերք

151.Միկոտոքսիկոզները վերաբերում են

Ա-սննդային թունավորումներին

Բ-թունաքիմիկատներով թունավորումներին

Գ-հեմոտրոպ թույներով թունավորումներին

Դ-ընդհանուր ֆունկցիոնալ ազդեցության թույներով թունավորումներին

152.Ակոնիտով թունավորումը վերաբերում է

Ա-սննդային թունավորումներին

Բ-թունաքիմիկատներով թունավորումներին

Գ-հեմոտրոպ թույներով թունավորումներին

Դ-ընդհանուր ֆունկցիոնալ ազդեցության թույներով թունավորումներին

153.Ցիտիզինով թունավորումը վերաբերում է

Ա-սննդային թունավորումներին

Բ-հեմոտրոպ թույներով թունավորումներին

Գ-թմրամիջոցներով թունավորումներին

Դ-ընդհանուր ֆունկցիոնալ ազդեցության թույներով թունավորումներին

154.Դիակի զննման ժամանակ թունավորումից մահվան վերաբերյալ կողմնորոշիչ նշան կարող է լինել

Ա-մաշկի դեղնությունը

Բ-միակողմանի միոզը

Գ-կրծքավանդակի ենթամաշկային էմֆիզեման

Դ-որովայնի առաջային պատին «մեդուզայի գլուխը»

155.Դիակի զննման ժամանակ թունավորումից մահվան վերաբերյալ կողմնորոշիչ նշան կարող է լինել

Ա-ներարկման հետքը

Բ-միակողմանի միդրիազը

Գ-կրծքավանդակի ենթամաշկային էմֆիզեման

Դ-որովայնի առաջային պատին «մեդուզայի գլուխը»

156.Կեղծ մահվան է վերաբերում

Ա-լեթարգիան

Բ-գիտակցության մթագնումը

Գ-տերմինալ դադարը

Դ-կլինիկական մահը

157.Մահվան տեսակներին է վերաբերում

Ա-սպանությունը

Բ-թունավորումը

Գ-հիվանդությունը

Դ-մեխանիկական ասֆիքսիան

158.Ծակող-կտրող առարկայի մասնավոր հատկանիշին է վերաբերում

Ա-շեղբի արատը

Բ-շեղբի չափերը

Գ-բռնակի զանգվածը

Դ-սրման աստիճանը

159.Ծակող-կտրող առարկայի նույնականացումը հնարավոր է հետևյալի առկայության դեպքում

Ա-առարկայի և դրա արտապատկերման առկայության

Բ-հետք առաջացնող առարկայի առկայության

Գ-ընդհանուր հատկանիշներով նման առարկայի առկայության

Դ-հետքն ընդունող մակերեսի վրա առարկայի արտապատկերման առկայության

160.Վառոդը կարելի է հայտնաբերել ___ փորձի օգնությամբ

Ա-Վլադիմիրսկու

Բ-Կունկել–Վիցելի

Գ-Սվեշնիկով–Իսաևի

Դ-Մագնուս–Ռիչարդսոնի

161.Գունավոր դրոշմների մեթոդում որպես լուծիչ 25% քացախաթթվի լուծույթ օգտագործելիս կարմրամանուշակագույն գունավորումը համապատասխանում է

Ա-կապարին

Բ-նիկելին

Գ-կոբալտին

Դ-ալյումինին

162.Գունավոր դրոշմների մեթոդով մետաղների հայտնաբերման ժամանակ մուգ կանաչ գունավորումը համապատասխանում է

Ա-պղնձի առկայությանը

Բ-նիկելի առկայությանը

Գ-կոբալտի առկայությանը

Դ-կապարի առկայությանը

163.Գործվածքային և տրիկոտաժե արտադրատեսակների վնասվածքները բնութագրվում են հետևյալի բացակայությամբ

Ա-սուր անկյուն ծայրերի

Բ-փոշոտված/ցրված ծայրերի

Գ-փրծված (թելքավոր) ծայրերի

Դ-կլորավուն ծայրերի

164.Գործվածքի վրա գործիքի իդեալական սուր կտրող եզրի ազդեցության հատկանիշ է

Ա-թելերի մնացորդային դեֆորմացիաների բացակայությունը

Բ-մանրաթելերի սեղմվելը կոնգլոմերատի մեջ

Գ-մանրաթելերի ծայրերի ճեղքումն ու բարակումը

Դ-թելի երկարությամբ թուլացումը՝ առանց ընդհատման

165.Երկարատև տեղափոխման անհրաժեշտության դեպքում դիակից վերցված աճառները տեղադրում են

Ա-գլիցերինի 50% ջրային լուծույթի մեջ

Բ-բուֆերացված ֆորմալինի 10% լուծույթի մեջ

Գ-Ռատնևսկու քացախասպիրտային լուծույթի մեջ

Դ-էթիլ սպիրտի խտացված լուծույթի մեջ

166.Նեխային փոփոխություններով դիակների վրա մուրը հայտնաբերում են

Ա-ԻՖ /ինֆրակարմիր/ ճառագայթներով լուսանկարման միջոցով

Բ-գունավոր դրոշմների մեթոդով

Գ-իմունահյուսվածաբանական մեթոդով

Դ-ուղղակի ստերեոմիկրոսկոպիայի միջոցով

167.Գերսառեցումից մահվան դեպքերում հիստոքիմիական հետազոտությամբ լյարդում կաթնաթթվի քանակը

Ա-նվազում է

Բ-բարձրանում է

Գ-չի փոփոխվում

Դ-փոփոխվում է քաոտիկ կերպով

168.Գերսառեցումից մահվան դեպքերում հիստոքիմիական հետազոտությամբ լյարդում գլիկոգենի քանակը

Ա-նվազում է

Բ-բարձրանում է

Գ-չի փոփոխվում

Դ-փոփոխվում է քաոտիկ կերպով

169.Արյան տեսակային պատկանելիության որոշումն իրականացվում է՝

Ա-պրեցիպիտացիայի ռեակցիայի միջոցով

Բ-ՇԻԿ-/ շիճուկային իմունաքիմիական կոմպլեքս/ ռեակցիայի միջոցով

Գ-սուպրավիտալ ռեակցիայի միջոցով

Դ-իմունոցիտոքիմիական ռեակցիայի միջոցով

170.Արյան խմբի որոշման հիմքում ընկած է՝

Ա-ագլյուտինացիայի ռեակցիան

Բ-պրեցիպիտացիայի ռեակցիան

Գ-ՇԻԿ-ռեակցիան

Դ-դեզամինացման ռեակցիան

171.Նախկինում տարած գլխուղեղի-գանգուղեղային վնասվածքի փաստի թաքցնելը հանդիսանում է՝

Ա-դիսսիմուլյացիա

Բ-դեզագրավացիա

Գ-իրական սիմուլյացիա

Դ-պաթոլոգիական սիմուլյացիա

172.Ինքնավնասումը՝ դիտավորյալ վարակված առարկայով, հանդիսանում է՝

Ա-արհեստական հիվանդություն

Բ-իրական սիմուլյացիա

Գ-սիմուլյացիոն հիվանդություն

Դ-պաթոլոգիական սիմուլյացիա

173.Զինծառայողի կողմից աջ ձեռքի երկրորդ մատի ինքնավնասումը հանդիսանում է՝

Ա-ինքնախեղում (անդամախեղում)

Բ-դեզագրավացիա

Գ-արհեստական հիվանդություն

Դ-պաթոլոգիական սիմուլյացիա

174.Կենդանի անձի դատաբժշկական փորձաքննության անցկացման համար հիմք ՉԷ հանդիսանում հետևյալի հաստատումը՝

Ա-գենդերային ինքնության

Բ-սեռական անձեռնմխելիության

Գ-բեղմնավորման ունակության

Դ-սեռական հարաբերություն ունենալու ունակության

175.Կուսաթաղանթի պատռվածքի տեղում արտահայտված հիպերեմիան, հյուսվածքների այտուցը և արյունազեղումները, որոնք ուղեկցվում են վերքային մակերեսներից արյունահոսությամբ, համապատասխանում են դեֆլորացիայի վաղեմությանը՝

Ա-մինչև 1 օր

Բ-մինչև 3 օր

Գ-մինչև 6 օր

Դ-մինչև 9 օր

176.Դեֆլորացիայից հետո կուսաթաղանթի հյուսվածքներում բորբոքման տարրերը սովորաբար հայտնաբերվում են ___ օրերին

Ա-2–3

Բ-4–6

Գ-6–7

Դ-7–14

177.Դեֆլորացիայից հետո կուսաթաղանթի պատռվածքների տեղերում արտահայտված գրանուլացիոն հյուսվածքը հայտնաբերվում է ___ օրերին

Ա-4–6

Բ-1–2

Գ-2–3

Դ-7–10

178.Ռենտգենաբանական մեթոդով ոսկրային կոշտուկը միջինում հայտնաբերվում է ___ օրը

Ա-20

Բ-5

Գ-10

Դ-15

179.Ոսկրային հյուսվածքի սերտաճումն ավելի արագ է տեղի ունենում հետևյալ կոտրվածքների դեպքում

Ա-թեք

Բ-լայնական

Գ-բեկորային

Դ-ֆրագմենտային

180.Տեսողության սրությունը մինչև վնասվածքը 0.05 լինելու դեպքում ակնագնդի հեռացումը, առողջությանը պատճառված վնասի ծանրության աստիճանով, որակավորվում է որպես՝

Ա-միջին ծանրության վնաս առողջությանը

Բ-ծանր վնաս առողջությանը

Գ-թեթև վնաս առողջությանը

Դ-վնաս առողջությանը չի պատճառվել

181.Անձի դեմքի այլանդակման փաստը հաստատում է

Ա-դատարանը

Բ-բժիշկ-կոսմետոլոգը

Գ-բժիշկ-պլաստիկ վիրաբույժը

Դ-բժիշկ-դատաբժշկական փորձագետը

182.Նախկինում վիրահատված առաջային խաչաձև կապանի պատռվածքը՝ հարվածի հետևանքով, որակավորվում է որպես՝

Ա-միջին ծանրության վնաս առողջությանը

Բ-ծանր վնաս առողջությանը

Գ-թեթև վնաս առողջությանը

Դ-առողջությանը վնաս չպատճառած

183.Զորակոչի ժամանակ ուսահոդի սովորութային հոդախախտի գիտակցված թաքցնումը որակավորվում է որպես՝

Ա-դիսսիմուլյացիա

Բ-դեզագրավացիա

Գ-ինքնախեղում (անդամախեղում)

Դ-արհեստական հիվանդություն

184.Դատաբժշկական փորձագետը հաստատում է

Ա-սեռական ակտի փաստը

Բ-բռնաբարության փաստը

Գ-սեռական հանցագործության փաստը

Դ-սեռական բնույթի բռնի գործողությունների փաստը

185.Բազմաթիվ, չներթափանցող վերքերի դեպքում որովայնի առաջային պատի վնասվածքի ծանրության աստիճանը գնահատվում է հետևյալ չափանիշով՝

Ա-առողջության խանգարման տևողությունը

Բ-կյանքին վտանգ սպառնացող վնաս պատճառելը

Գ-մասնագիտական աշխատունակության լրիվ կորուստը

Դ-ընդհանուր աշխատունակության զգալի կայուն կորուստը

186.Դիֆուզ աքսոնալ վնասվածքը, առողջությանը պատճառված վնասի ծանրության աստիճանով, որակավորվում է որպես

Ա-ծանր վնաս առողջությանը

Բ-թեթև վնաս առողջությանը

Գ-առողջությանը վնաս չպատճառած

Դ-միջին ծանրության վնաս առողջությանը

187.Միջին աստիճանի գլխուղեղի կոնտուզիան, առողջությանը պատճառված վնասի ծանրության աստիճանով, որակավորվում է որպես՝

Ա-ծանր վնաս առողջությանը

Բ-թեթև վնաս առողջությանը

Գ-առողջությանը վնաս չպատճառած

Դ-միջին ծանրության վնաս առողջությանը

188.Պլևրալ խոռոչ ներթափանցող վերքը, առողջությանը պատճառված վնասի ծանրության աստիճանով, որակավորվում է որպես՝

Ա-ծանր վնաս առողջությանը

Բ-թեթև վնաս առողջությանը

Գ-առողջությանը վնաս չպատճառած

Դ-միջին ծանրության վնաս առողջությանը

189.Իրանի, վերին և ստորին վերջույթների բազմաթիվ հեմատոմաները, որոնք հանգեցրել են առողջության երկարատև խանգարման, առողջությանը պատճառված վնասի ծանրության աստիճանով որակավորվում են որպես՝

Ա-միջին ծանրության վնաս առողջությանը

Բ-թեթև վնաս առողջությանը

Գ-ծանր վնաս առողջությանը

Դ-առողջությանը վնաս չպատճառած

190.Ծնկահոդը կազմող ոսկրերի կոտրվածքը, առողջությանը պատճառված վնասի ծանրության աստիճանով, որակավորվում է որպես՝

Ա-ծանր վնաս առողջությանը

Բ-թեթև վնաս առողջությանը

Գ-միջին ծանրության վնաս առողջությանը

Դ-առողջությանը վնաս չպատճառած

191.«Ձախ ազդրի վերին երրորդականի կոնտուզիա» ախտորոշումը հնարավորություն է տալիս եզրակացություն տալ՝

Ա-վնասի ծանրության աստիճանը որոշելու անհնարինության մասին

Բ-թեթև աստիճանի վնաս պատճառելու մասին

Գ-միջին աստիճանի վնաս պատճառելու մասին

Դ-ծանր վնաս պատճառելու մասին

192.Ո՞ր նյութի փոխանակությամբ է պայմանավորված դիակային փայտացման զարգացումը.

Ա-Ադենոզինեռֆոսֆատի

Բ-Կալցիումի իոնների

Գ-Լակտատդեհիդրոգենազի

Դ-Գլիկոգենի

193.Սենյակային ջերմաստիճանում մահից քանի՞ ժամ անց է դիակային փայտացումը հասնում իր առավելագույն արտահայտվածությանը բոլոր մկանախմբերում.

Ա-20–24 ժամ

Բ-6–8 ժամ

Գ-2–4 ժամ

Դ-48–72 ժամ

194.Դիակի նեխման ժամանակ ո՞ր գազի և հեմոգլոբինի փոխազդեցությունից է առաջանում սուլֆհեմոգլոբինը, որը ներկում է որովայնի պատի մաշկը կանաչ գույնով.

Ա-Ծծմբաջրածնի

Բ-Մեթանի

Գ-Ածխաթթու գազի

Դ-Ամոնիակի

195.Դիակային բծերի ո՞ր փուլում է դիտվում արյան պլազմայի անցում անոթի պատով դեպի շրջակա հյուսվածքներ, երբ ճնշում գործադրելիս բիծը բացարձակապես չի գունատվում.

Ա-Իմբիբիցիա

Բ-Ստազ

Գ-Հիպոստազ

Դ-Սուպրավիտալ ռեակցիա

196.Ո՞ր կենսաբանական հեղուկում կալիումի (K^+) իոնների կոնցենտրացիայի գծային աճն է հանդիսանում ամենահավաստի լաբորատոր մեթոդը մահվան վաղեմությունը առաջին 24–48 ժամում որոշելու համար.

Ա-Ակնագնդի ապակենման մարմնում

Բ-Արյան պլազմայում

Գ-Ողնուղեղային հեղուկում

Դ-Լեղու մեջ

197.Դիակի նեխման ընթացքում առաջացող ո՞ր նյութերն են կոչվում «դիակային թույներ» (պտոմաիններ).

Ա-Կադավերին և պուտրեսցին

Բ-Ֆենոլ և կրեզոլ

Գ-Ացետոն և ֆորմալդեհիդ

Դ-Միզաթթու և կրեատինին

198.Մահվան ո՞ր պատճառի դեպքում է դիակային փայտացումը զարգանում ակնթարթային (կատալեպտիկ փայտացում)՝ ֆիքսելով մարմնի դիրքը մահվան պահին.

Ա-Կենտրոնական նյարդային համակարգի (երկարավուն ուղեղի) ծանր վնասվածքի

Բ-Ծայրահեղ հյուծվածության (կախեքսիա)

Գ-Մկանային թուլացնող դեղամիջոցների գերդոզավորման

Դ-Ջրահեղձման

199.Մաշկի հետմահու չորացման (պերգամենտացման) երևույթը աչքի եղջերաթաղանթի վրա կոչվում է՝

Ա-Լյարշեի բծեր

Բ-Բելոգլազովի ախտանիշ

Գ-Մինակովի բծեր

Դ-Դիակային էմֆիզեմա

200.Ո՞ր միջավայրում գտնվելու դեպքում է դիակը ենթարկվում տորֆային դաբաղման.

Ա-Թթու միջավայր ունեցող ճահիճներում

Բ-Չոր, օդափոխվող ավազուտներում

Գ-Բարձր խոնավությամբ կավահողում

Դ-Հոսող ջրամբարներում

201.Մումիֆիկացման (դիակի բնական չորացման) հիմնական նախապայմանն է.

Ա-Բարձր ջերմաստիճանը, ցածր խոնավությունը և լավ օդափոխությունը

Բ-Խոնավության բարձր մակարդակը և թթվածնի բացակայությունը

Գ-Ցածր ջերմաստիճանը և հողի բարձր կավայնությունը

Դ-Անաերոբ բակտերիաների առկայությունը

202.Ի՞նչ գույն են ունենում դիակային բծերը մեթհեմոգլոբին առաջացնող թույներով թունավորվելիս՝

Ա-Դարչնագույն

Բ-Վառ կարմիր կամ վարդագույն

Գ-Մուգ կանաչավուն

Դ-Դեղնավուն

203.Մահվանից հետո առաջին ժամերի ընթացքում դիակի սառեցումը միջինում տեղի է ունենում հետևյալ արագությամբ (սենյակային ջերմաստիճանային պայմաններում)՝

Ա-Ժամում 1 °C (առաջին 6 ժամում)

Բ-Ժամում 3-4 °C

Գ-Ժամում 0.2 °C

Դ-24 ժամում ընդամենը 2 °C

204.Ի՞նչ է իրենից ներկայացնում դիակային էմֆիզեման.

Ա-Նեխային գազերի կուտակումը ենթամաշկային ճարպային բջջանքում

Բ-Թոքերում հետմահու օդի կուտակումը

Գ-Սրտի խոռոչների լայնացումը արյան կանգի պատճառով

Դ-Ողնուղեղային հեղուկի ներծծումը հյուսվածքների մեջ

205.Ո՞ր երևույթն է պատկանում դիակի պահպանող (կոնսերվացնող) ուշ դիակային երևույթներին.

Ա-Մոմաճարպի առաջացումը

Բ-Նեխումը

Գ-Աուտոլիզը

Դ-Իմբիբիցիան

206.Մահվան վաղեմության որոշման «մկանային էլեկտրագրգռականության» մեթոդը (սուպրավիտալ ռեակցիա) արդյունավետ է մահից հետո առավելագույնը մինչև.

Ա-6–8 ժամ

Բ-2 ժամ

Գ-24 ժամ

Դ-3 օր

207.Հիպոստազի փուլում դիակային բծերի վրա ճնշում գործադրելիս բիծը՝

Ա-Ամբողջությամբ անհետանում կամ գունատվում է, ապա վերականգնվում

Բ-Գույնը չի փոխում

Գ-Դառնում է կանաչավուն

Դ-Տեղաշարժվում է մարմնի հակառակ կողմը

208.Մահվանից որքա՞ն ժամանակ անց է սովորաբար սկսվում դիակի տեսանելի աուտոլիզը (ինքնալուծումը) ենթաստամոքսային գեղձում և ստամոքսում.

Ա-Առաջին 1-3 ժամվա ընթացքում

Բ-12-24 ժամ հետո

Գ-3 օր հետո

Դ-Միայն նեխման փուլում

209.Ո՞ր գործոնն է նվազեցնում դիակային սառեցման արագությունը՝

Ա-Լավ զարգացած ենթամաշկային ճարպաշերտը

Բ-Դիակի մերկ վիճակը

Գ-Ցածր խոնավությունը

Դ-Հյուծվածությունը

210.Ստազի փուլում դիակային բծերի վրա ճնշում գործադրելիս բիծը.

Ա-Գունատվում է և որոշ ժամանակ անց վերականգնվում

Բ-Գույնը չի փոխում

Գ-Անհետանում է

Դ-Կապտում է

211.Ի՞նչ է կենսաբանական մահը;

Ա-Օրգանիզմի՝ որպես ամբողջական համակարգ կենսագործունեության անդառնալի դադարը

Բ-Շնչառության ժամանակավոր դադարը

Գ-Գլխուղեղի կեղևի մեկուսացված մահը

Դ-Կլինիկական մահվան առաջին 2 րոպեն

212.Ի՞նչ գույն են ունենում դիակային բծերը ցիանիդով թունավորվելիս.

Ա-Բալագույն

Բ-Մուգ կապտավուն

Գ-Կարմրավուն

Դ-դարչնագույն

213.Դիակային փայտացումը մարմնի մկաններում սովորաբար տարածվում է.

Ա-Վերից վար

Բ-Վարից վեր

Գ-Անկանոն՝ առանց հերթականության

Դ-Միայն որևէ մակերևույթի հպված շրջաններում

214.Մահից քանի՞ ժամ անց է դիակային փայտացումը սկսում թուլանալ.

Ա-48-72 ժամ հետո

Բ-12 ժամ հետո

Գ-6-8 ժամ հետո

Դ-1 շաբաթ հետո

215.Կենդանական աշխարհի (միջատների) կողմից դիակի քայքայումն ուսումնասիրող գիտական ուղղությունը կոչվում է.

Ա-Դատական էնտոմոլոգիա

Բ-Դատական տոքսիկոլոգիա

Գ-Դատական սերոլոգիա

Դ-Դատական օստեոլոգիա

216.Ի՞նչ գույն է ունենում դիակի արյունը օրգանիզմի ընդհանուր սառեցումից մահանալու դեպքում ձախ նախասրտում.

Ա-Բաց կարմիր

Բ-Մուգ դարչնագույն

Գ-Մուգ կապտավուն

Դ-Սև

217.Մահվան վաղեմությունը որոշելու համար աչքի բիբը պիլոկարպինի կամ ատրոպինի ներարկմանը արձագանքում է մահից հետո մինչև.

Ա-3-5 ժամ (երբեմն մինչև 24 ժամ՝ կախված պայմաններից)

Բ-30 րոպե

Գ-3 օր

Դ-48 ժամ

218.Մոմաճարպի առաջացման էությունը կայանում է.

Ա-Ճարպերի հիդրոլիզի և օճառացման մեջ

Բ-Մկանային սպիտակուցների քայքայման մեջ

Գ-Ոսկրերի փափկեցման մեջ

Դ-Գլիկոգենի քայքայման մեջ

219.Ո՞րն է դիակի չորացման առաջին արտաքին դրսևորումը բաց աչքերով դիակների մոտ.

Ա-Եղջերաթաղանթի պղտորումը և չորացումը

Բ-Սպիտակուցաթաղանթի կանաչավուն երանգավորումը

Գ-Կոպերի փքվածությունը

Դ-Բբի լայնացումը

220.Բութ առարկայի հարվածից առաջացած գլխամաշկի պատռած-սալջարդ վերքի հիմնական տարբերակիչ հատկանիշը կտրած վերքից հանդիսանում է.

Ա-Վերքի անհարթ եզրերը

Բ-Վերքի մեծ երկարությունը

Գ-Առատ արյունահոսությունը

Դ-Վերքի սուր անկյունները

221.Գանգի հիմի կոտրվածքների ժամանակ «ակնոցի ախտանիշը» կենդանության օրոք ստացված վնասվածքի դեպքում սովորաբար ի հայտ է գալիս.

Ա-Մի քանի ժամ անց

Բ-Հարվածից անմիջապես 1 րոպե անց

Գ-Միայն մահից հետո

Դ-3 օր անց

222.Ի՞նչ է բնորոշ երկաթուղային անիվով մարմնի վրայով անցնելիս մաշկի վրա առաջացող «սեղմման գոտուն».

Ա-Մաշկի չորացում, պնդացում և դեղնադարչնագույն երանգ (պերգամենտացում)

Բ-Մաշկի վառ կարմիր գունավորում

Գ-Մաշկի պատռվածքներ աստղաձև տեսքով

Դ-Մաշկի այրվածք

223.Բարձրությունից վայր ընկնելու դեպքում (ներբանների դիրքով) ո՞ր վնասվածքն է համարվում հեռակա վնասվածք.

Ա-Գանգի հիմի օղակաձև կոտրվածքը մեծ ծոծրակային անցքի շուրջ

Բ-Կրունկոսկրերի կոտրվածքը

Գ-Ոտնաթաթի փափուկ հյուսվածքների սալջարդը

Դ-Ծնկան հոդի պատռվածքը

224.Արյունազեղման կանաչավուն երանգը վնասվածքից մի քանի օր անց պայմանավորված է հեմոգլոբինի քայքայման արդյունքում ո՞ր պիգմենտի առաջացմամբ.

Ա-Բիլիվերդինի

Բ-Բիլիրուբինի

Գ-Հեմոսիդերինի

Դ-Մեթհեմոգլոբինի

225.Ծակած-կտրած վերքին բնորոշ է՝

Ա-Վերքի խորության գերազանցումը երկարությանը

Բ-Վերքի երկարության գերազանցումը խորությանը

Գ-Վերքի շուրջը քերծման գոտու առկայությունը

Դ-Վնասվածքի շրջանում տափակ ոսկրի հյուսվածքային կլորավուն դեֆեկտի առկայությունը

226.Հիմնականում ո՞ր մեխանիզմով է առաջանում գլխուղեղի հակահարվածային սալջարդը.

Ա-Երբ շարժվող գլուխը հարվածում է անշարժ առարկային

Բ-Երբ շարժվող առարկան հարվածում է անշարժ գլխին

Գ-Միայն հրազենային վնասվածքների ժամանակ

Դ-Պարանոցի սեղմման հետևանքով

227.Սուր, ծակող-կտրող առարկայով (դանակով) հասցված վերքի անկյունների ձևը հնարավորություն է տալիս որոշել՝

Ա-Դանակի շեղբի կառուցվածքը

Բ-Առարկայի երկարությունը

Գ-Հարվածի ուժգնությունը

Դ-Տուժողի դիրքը

228.Գլխուղեղի ո՞ր թաղանթների միջև է կուտակվում արյունը էպիդուրալ հեմատոմայի ժամանակ.

Ա-Գանգոսկրի և ուղեղի կարծր թաղանթի միջև

Բ-Կարծր թաղանթի և սարդոստայնային թաղանթի միջև

Գ-Անոթաթաղանթի և սարդոստայնային թաղանթի միջև

Դ-Ուղեղի նյութի ներսում

229.Մաշկի քերծվածքի ընդհատումները և դրա հիմքում էպիդերմիսի շերտավորման ուղղությունը թույլ են տալիս պարզել.

Ա-Բութ առարկայի շարժման (ազդեցության) ուղղությունը

Բ-Բութ առարկայի քաշը

Գ-Բութ առարկայի ձևը

Դ-Վնասվածքը ստանալու ստույգ ժամկետը

230.Ո՞ր ախտանիշն է վկայում այն մասին, որ կողոսկրերի կոտրվածքները առաջացել են կենդանության օրոք.

Ա-Միջկողային մկանների արյունազեղումը կոտրվածքի շրջանում

Բ-Ոսկրային բեկորների տեղաշարժը

Գ-Կողոսկրի աճառային մասի անջատումը

Դ-Դիակային բծերի առկայությունը կոտրվածքի շրջանում

231.Երկար խողովակավոր ոսկրերի կոտրվածքների դեպքում մահվան հանգեցնող վաղ և վտանգավոր բարդություններից է.

Ա-Ճարպային էմբոլիան

Բ-Օդային էմբոլիան

Գ-Գազային էմբոլիան

Դ-Ենթանրբենային արյունազեղումը

232.Կտրած վերքի եզրերին բնորոշ է.

Ա-Հարթություն և արյունազեղման բացակայություն

Բ-Արյունազեղվածություն և անհարթություն

Գ-Մինուս-հյուսվածքի առկայություն

Դ-Օղակաձև քերծվածք

233.Բութ գործիքների դասակարգման մեջ ո՞ր խմբին է պատկանում մուրճը.

Ա-Սահմանափակ հարվածող մակերեսով գործիք

Բ-Ընդարձակ հարթ մակերեսով գործիք

Գ-Գլանաձև գործիք

Դ-Կիսագնդաձև գործիք

234.Դիակի մաշկի քերծվածքի սկզբնական զննմամբ դրա հատակի բարձր դիրքը (առաջին 6-12 ժամում) վկայում է՝

Ա-Կենդանության օրոք առաջացման մասին

Բ-Հյուսվածքի նեխման մասին

Գ-Հետմահու առաջացման մասին

Դ-Մումիֆիկացման մասին

235.Ո՞ր օրգանի պատռվածքն է առավել հաճախ հանդիպում որովայնի բութ վնասվածքի դեպքում.

Ա-Լյարդի

Բ-Ստամոքսի

Գ-Միզապարկի

Դ-Հաստ աղիքի

236.Ծակած վերքի խողովակի ուղղությունը մարմնում թույլ է տալիս որոշել.

Ա-Ծակող առարկայի ներթափանցման ուղղությունը և անկյունը

Բ-Տուժողի հասակը

Գ-Վնասվածքը պատճառած գործիքի տեսակը

Դ-Վնասվածքը պատճառած առարկայի քաշը

237.Գլխուղեղի ցնցման հիմնական դատաբժշկական հատկանիշն է.

Ա-Ակնահատակի գերարյունությունը և կարճատև ամնեզիան

Բ-Կարճատև ամնեզիան

Գ-Էպիդուրալ արյունազեղումը

Դ-Գլխի շրջանի ենթամաշկային արյունազեղումը

238.Դատաբժշկական վնասվածքաբանության մեջ «հեմատոմա» հասկացությունը տարբերվում է «արյունազեղումից» նրանով, որ հեմատոման.

Ա-Ձևավորում է արյունով լցված արհեստական խոռոչ հյուսվածքների շերտազատմամբ

Բ-Առաջանում է միայն վրաերթերի դեպքում

Գ-Չի պարունակում հեմոգլոբին

Դ-Ունի միայն բաց կարմիր գույն

239.Արյունազեղման գույնի փոփոխությունը սկսվում է.

Ա-Եզրերից դեպի կենտրոն

Բ-Կենտրոնից դեպի եզրեր

Գ-Անկանոն կետերով

Դ-Պատճառումից մեկ օր անց

240.Գլխի շրջանին սահմանափակ ազդեցության մակերես ունեցող առարկայի հարվածից գանգի թաղի ոսկրերի կոտրվածքը հարվածի տեղում սովորաբար լինում է.

Ա-Ներհրված

Բ-Օղակաձև

Գ-Ճեղքանման՝ հեռակա տարածության վրա

Դ-Գծային և բեկորային

241.Ո՞ր վերքերին է բնորոշ «վերքի շուրջ մաշկի օղակաձև քերծումը».

Ա-Հրազենային վերքերին

Բ-Ծակած վերքերին

Գ-Կտրած վերքերին

Դ-Կոտորած վերքերին

242.Նորածինների դիակների կենդանաճնության որոշման համար կիրառվում են հետևյալ փորձերը, բացի՝

Ա-Կունկել-Վետցելի

Բ-Բրեսլաուի

Գ-Հալեն-Ռայգեր-Շրեյերի

Դ-Դիլոնի

243.Սուր առարկաների ներգործությունից առաջացած վնասվածքների խմբին չի դասվում՝

Ա-Սալջարդ-պատռված վերքը

Բ-Ծակած վերքը

Գ-Կտրած վերքը

Դ-Կոտորած վերքը

244.Կոտորած վերքին բնորոշ է՝

Ա-Մեծ խորություն, հարթ եզրեր, անկյուններում մաշկի ճաքեր և ստորադիր ոսկրերի վնասում

Բ-Միայն մակերեսային քերծվածքներ

Գ-Հյուսվածքային խտրոցների առկայություն և սուր անկյուններ

Դ-Մինուս-հյուսվածքի առկայություն

245.Կախման հետևանքով պարանոցի անատոմիական կառույցների զննմամբ ո՞ր ոսկրի կոտրվածքն է հաճախ հանդիպում.

Ա-Կորճոսկրի (ենթալեզվային ոսկր)

Բ-Անրակոսկրի

Գ-Ատլանտի (առաջին պարանոցային ողի)

Դ-Ստորին ծնոտի

246.Եթե մաշկի վրա առկա է վերք, որի խորությունը զգալիորեն գերազանցում է մաշկային անցքի երկարությանը, ապա այն որակվում է որպես՝

Ա-Ծակած կամ ծակած-կտրած վերք

Բ-Կտրած վերք

Գ-Պատռված վերք

Դ-Կծած վերք

247.Ո՞ր գործոնն է հանդիսանում վնասվածքային շոկի առաջացման հիմնական անատոմո-ֆիզիոլոգիական հիմքը.

Ա-Ուժեղ ցավային գրգիռը

Բ-Ջերմաստիճանի անկումը

Գ-Արյան զանգվածային սուր կորուստը

Դ-Հիպերթերմիան

248.Հրազենային վնասվածքի մուտքի անցքի շուրջ ձևավորվող «աղտոտման գոտին» առաջանում է.

Ա-Գնդակի մակերեսից մետաղի փոշուց, յուղից և մրից

Բ-Գնդակի ջերմային ազդեցությունից

Գ-Վառոդային գազերի ազդեցությունից

Դ-Գնդակի ազդեցությունից առաջացած հագուստի վնասվածքից

249.Հրազենային վնասվածքի ո՞ր տարածության դեպքում է մաշկի վրա ազդում միայն գնդակը.

Ա-Հեռու տարածությունից

Բ-Մոտ տարածությունից (1-5 սմ)

Գ-Ընդհուպ կրակոց

Դ-Ընդհուպ ոչ հերմետիկ կրակոց դատարկ փամփուշտով

250.Գանգի թաղի վրա հրազենային վնասվածքի մուտքի անցքի պարագայում ոսկրային դեֆեկտի «ձագարը» լայնանում է.

Ա-Դեպի ներս

Բ-Դեպի դուրս

Գ-Ոսկրի հաստության մեջ չի լայնանում

Դ-Ունենում է միայն աստղաձև տեսք

251.Ի՞նչ է «մինուս-հյուսվածքի» ախտանիշը (Պիրոգովի ախտանիշ).

Ա-Հյուսվածքի բացակայությունը

Բ-Վերքի մեջ հագուստի կտորի բացակայությունը

Գ-Վերքի մեջ արյան մակարդուկի բացակայությունը

Դ-Ոսկրային բեկորների բացակայությունը

252.Ընդհուպ հերմետիկ կրակոցի ժամանակ գանգի թաղի ոսկրերի վրա վառոդային գազերի ազդեցությունից առաջանում է մաշկի պատռվածք, որն ունի.

Ա-Աստղաձև տեսք

Բ-Կլոր տեսք

Գ-Երկարավուն ճեղքանման տեսք

Դ-Քերծված եզրերով օվալաձև տեսք

253.Ի՞նչ է «Շտանց մարկան».

Ա-Զենքի փողաբերանի հետքի դրոշմումը մաշկի վրա

Բ-Ելքի անցքի մեծությունը

Գ-Գնդակի արտատպվածքի հետքը ոսկրի վրա

Դ-Վառոդի մրի տարածումը հագուստի շերտերի արանքում

254.Ոսկրաբեկորների տեղաշարժի ուղղությամբ ինչպե՞ս է որոշվում գնդակի ուղղությունը հյուսվածքներում.

Ա-Բեկորները տեղաշարժվում են գնդակի շարժման ուղղությամբ

Բ-Բեկորները տեղաշարժվում են գնդակի շարժմանը հակառակ ուղղությամբ

Գ-Բեկորները մնում են անշարժ

Դ-Բեկորները տեղաշարժվում են տարբեր ուղղություններով

255.Ո՞րն է հրազենային վնասվածքի ելքի անցքի հիմնական տարբերակիչ հատկանիշը մուտքի անցքից.

Ա-Քերծման և կեղտոտման գոտիների բացակայությունը

Բ-Կեղտոտման գոտու առկայությունը

Գ-Քերծման գոտու առկայությունը

Դ-Վերքի փոքր չափսերը

256.Որքան է կազմում որսորդական ողորկափող զենքից կոտորակով արձակված կրակոցի «կոտորակի կոմպակտ ազդեցության» առավելագույն հեռավորությունը՝

Ա-Մինչև 1 մետր

Բ-Մինչև 5-10 մետր

Գ-Մինչև 50 սանտիմետր

Դ-Մինչև 25 մետր

257.Հրազենային գնդակով օրգանիզմի հյուսվածքների վնասման մեխանիզմում ո՞ր երևույթն է առաջացնում վերքային խողովակից շատ ավելի մեծ տրամագծով հյուսվածքների վնասում.

Ա-Գնդակի հիդրոդինամիկ ազդեցությունը

Բ-Գնդակի ջերմաստիճանը

Գ-Վառոդի գազերի քիմիական կազմը

Դ-Գնդակի կոնտուզիոն ազդեցությունը

258.Ընդհուպ հերմետիկ կրակոցի ժամանակ տուժողի արյան մեջ և վերքի շրջանի հյուսվածքներում կարող է հայտնաբերվել բարձր կոնցենտրացիայով.

Ա-Կարբօքսիհեմոգլոբին

Բ-Օքսիհեմոգլոբին

Գ-Մեթհեմոգլոբին

Դ-Սուլֆհեմոգլոբին

259.Եթե կրակոցը կատարվել է հագուստով ծածկված մարմնամասի շրջանում, վառոդի մրի և մետաղացման հիմնական մասը կուտակվում է.

Ա-Հագուստի արտաքին շերտի վրա

Բ-Հագուստի ներքին շերտերի վրա

Գ-Ելքի անցքի շրջանում

Դ-Վերքային խողովակի միջին երրորդականում

260.Հրազենային գնդակային վերքի մուտքի անցքի ձևը, եթե գնդակը մարմնին է դիպել անկյան տակ (թեք կրակոց), սովորաբար լինում է.

Ա-Օվալաձև

Բ-Կանոնավոր կլոր

Գ-Աստղաձև

Դ-Ճեղքանման

261.Գնդակի «ռիկոշետ» երևույթը նշանակում է.

Ա-Գնդակի ուղղության փոփոխությունը

Բ-Գնդակի կինետիկ էներգիայի մեծացումը

Գ-Գնդակի դուրս թռչելը մուտքի անցքով

Դ-Վառոդի բռնկումը վերքի խոռոչում

262.Հրազենային վնասվածքի ելքի անցքի վրա գանգի թաղի ոսկրերի դեֆեկտի «ձագարը» լայնանում է դեպի.

Ա-Դուրս

Բ-Ներս

Գ-Չի լայնանում

Դ-Ունենում է միայն ճեղքի տեսք

263.Մեխանիկական շնչահեղձության արագ զարգացման դեպքում հայտնաբերվող «Տարդիեի բծերը» իրենցից ներկայացնում են.

Ա-Կետային արյունազեղումներ ընդերային պլևրայի ու էպիկարդի տակ

Բ-Կետային արյունազեղումներ գլխուղեղի կարծր թաղանթի տակ

Գ-Էքխիմոզներ վերջույթների վրա

Դ-Կետային արյունազեղումներ շաղկապենիների վրա

264.Կախման ժամանակ ճմլման ակոսը ունի հետևյալ բնորոշ առանձնահատկությունը.

Ա-Այն անհավասարաչափ է, թեք, փակ կամ բաց

Բ-Այն միշտ հորիզոնական է և փակ

Գ-Այն միշտ գտնվում է վահանաճառի մակարդակից ցած

Դ-Այն առավել խորն է հանգույցի շրջանում

265.Ջրահեղձման հավաստի դատաբժշկական լաբորատոր հատկանիշ է հանդիսանում ներքին օրգաններում և արյան մեջ.

Ա-Դիատոմային պլանկտոնի առկայությունը

Բ-Օդային պղպջակների առկայությունը

Գ-Թոքերում բակտերիաների բարձր քանակը

Դ-Արյան մեջ գլիկոգենի նորմայից պակաս քանակը

266.Շնչառական ուղիների փակումը փսխման զանգվածներով կամ արյունով դասվում է մեխանիկական ասֆիքսիայի՝

Ա-Օբտուրացիոն տեսակին

Բ-Ռեսպիրատոր տեսակին

Գ-Կոմպրեսիոն տեսակին

Դ-Ստրանգուլյացիոն տեսակին

267.Օղով խեղդման ժամանակ պարանոցի ճմլման ակոսը հիմնականում լինում է.

Ա-Հորիզոնական և փակ

Բ-Ընդհատվող և թեք

Գ-Միայն պարանոցի մի կողմում

Դ-Թույլ արտահայտված

268.Ջրահեղձման դեպքում դիակի արտաքին զննությամբ քթանցքների և բերանի շուրջ հայտնաբերվող հավաստի հատկանիշ է հանդիսանում՝

Ա-Սպիտակ, մանրապղպջակավոր կայուն փրփուրը

Բ-Մաշկի մացերացիան

Գ-Մաշկի հիպերեմիան

Դ-Բելոգլազովի ախտանիշը

269.Արյան սուր կորստից մահվան դեպքում ձախ փորոքի էնդոկարդի տակ հայտնաբերվող արյունազեղումները կոչվում են.

Ա-Մինակովի բծեր

Բ-Տարդիեի բծեր

Գ-Վիշնևսկու բծեր

Դ-Լյարշեի բծեր

270.Ձեռքերով խեղդման ժամանակ պարանոցի մաշկի վրա հայտնաբերվում են.

Ա-Կիսալուսնաձև քերծվածքներ և կլորավուն արյունազեղումներ

Բ-Միայն մեկ հորիզոնական ակոս

Գ-Աստղաձև վերքեր

Դ-Սալջարդ վերքեր

271.Ի՞նչ բնորոշ հատկանիշ է դիտվում դիակի ջրում երկարատև գտնվելու ժամանակ

Ա-«Մահվան ձեռնոցներ»

Բ-Վիշնևսկու ախտանիշ

Գ-Ասֆիքսիայից վրա հասած մահվան հաստատում

Դ-Կմախքացման բացակայությունը

272.Կախման ժամանակ, եթե հանգույցը գտնվում է պարանոցի հետին մասում (ծոծրակի շրջանում), ապա կախումը կոչվում է.

Ա-Տիպիկ

Բ-Ատիպիկ

Գ-Հետին

Դ-Ստորին

273.Մեխանիկական շնչահեղձության զարգացման որ փուլում է դիտվում առավելագույն արտահայտված էքսպիրատոր հևոց և կլոնիկ-տոնիկ ցնցումներ.

Ա-Երկրորդ փուլում

Բ-Առաջին փուլում

Գ-Շնչառության ընդհատման փուլում

Դ-Հոգևարքի փուլում

274.Շնչառական ուղիների փակումը պինդ օտար մարմիններով կոչվում է.

Ա-Օբտուրացիա

Բ-Ստրանգուլյացիա

Գ-Ասպիրացիա

Դ-Կոմպրեսիա

275.Կրծքավանդակի և որովայնի սեղմումը ծանր առարկաներով առաջացնում է շնչահեղձություն, որի ժամանակ դեմքի և պարանոցի մաշկի վրա ձևավորվում է բնորոշ.

Ա-էքխիմատոզային դիմակ

Բ-Սպիտակ դիմակ

Գ-Մագաղաթանման դիմակ

Դ-Մահվան դիմակ

276.Ածխածնի մոնօքսիդով թունավորման ժամանակ դիակային բծերը և արյունն ունենում են վառ կարմիր գույն, որը պայմանավորված է հետևյալ միացության առաջացմամբ.

Ա-Կարբօքսիհեմոգլոբին

Բ-Մեթհեմոգլոբին

Գ-Կարբհեմոգլոբին

Դ-Միոգլոբին

277.Էթիլ սպիրտի ո՞ր կոնցենտրացիան է արյան մեջ սովորաբար համարվում մահացու.

Ա-5.0–6.0 պրոմիլե (‰)

Բ-1.5–2.5 պրոմիլե (‰)

Գ-0.5–1.0 պրոմիլե (‰)

Դ-4.0-5.0 պրոմիլե (‰)

278.Ո՞ր թույնով սուր թունավորման դեպքում է դիակի ներքին օրգանների հերձման ժամանակ զգացվում դառը նշի հոտ.

Ա-Կապտաթթվից

Բ-Ֆոսֆորօրգանական միացություններից

Գ-Ատրոպինից

Դ-Սնդիկի աղերից

279.Մկնդեղով թունավորման կասկածի դեպքում լաբորատոր հետազոտության համար առաջնահերթ պետք է վերցնել.

Ա-Մազերը, եղունգները և ոսկրային հյուսվածքը

Բ-Լյարդը և լեղապարկը

Գ-Ողնուղեղային հեղուկը և աչքի ապակենման մարմինը

Դ-Սրտի խոռոչների արյունը

280.Կարբոֆոսով, դիխլոֆոսով (ֆոսֆորօրգանական միացություններ) թունավորման հիմնական պաթոգենետիկ մեխանիզմում տեղ է գտնում հետևյալ ֆերմենտի ընկճումը.

Ա-Ացետիլխոլինէսթերազի

Բ-Ցիտոխրոմօքսիդազի

Գ-Լիպազայի

Դ-Կատալազի

281.Դիակի ստամոքսի լորձաթաղանթի բազմակի կետային արյունազեղումների առկայությունը (Վիշնևսկու բծեր) հանդիսանում է բնորոշ նշան.

Ա-Օրգանիզմի ընդհանուր սառեցման

Բ-Ջրահեղձման

Գ-Էլեկտրահարման

Դ-Արևահարության

282.Ո՞ր նյութով թունավորվելիս է զարգանում ընդհանուր հյուսվածքային հիպօքսիա՝ բջիջների կողմից թթվածնի յուրացման արգելակման հետևանքով.

Ա-Ցիանիդներով

Բ-Մորֆինով

Գ-Կապարով

Դ-Բարբիտուրատներով

283.Մեթիլ սպիրտով թունավորման ժամանակ օրգանիզմում դրա փոխանակության արդյունքում առաջացած ո՞ր տոքսիկ նյութն է վնասում տեսողական նյարդը՝ առաջացնելով կուրություն.

Ա-Ֆորմալդեհիդը

Բ-Բութանոլը

Գ-Ացետոնը

Դ-Գլիցերինը

284.Ուտիչ նատրիումով թունավորվելիս ստամոքսի պատի վնասման բնույթը կոչվում է՝

Ա-Կոլիկվացիոն (թաց) նեկրոզ

Բ-Կոագուլյացիոն (չոր) նեկրոզ

Գ-Ատրոֆիկ նեկրոզ

Դ-Հիպերտրոֆիկ նեկրոզ

285.Ուժեղ թթուներով թունավորվելիս ստամոքսի պատին զարգանում է՝

Ա-Կոագուլյացիոն (չոր) նեկրոզ

Բ-Կոլիկվացիոն (թաց) նեկրոզ

Գ-Գազային էմֆիզեմա

Դ-Ատրոֆիկ նեկրոզ

286.Սնդիկի միացություններով սուր թունավորման ժամանակ առավելագույնը վնասվում են հետևյալ օրգանները՝

Ա-Երիկամները

Բ-Թոքերը

Գ-Ոսկրերը

Դ-Սրտամկանը

287.Ո՞ր թույնն է պատկանում «արյունն ախտահարող թույների» խմբին, որը կապվում է հեմոգլոբինի հետ՝ առաջացնելով մեթհեմոգլոբին.

Ա-Նատրիումի նիտրիտը

Բ-Շմոլ գազը

Գ-Ատրոպինը

Դ-Կալիումի ցիանիդը

288.Գանգի թաղը կազմող ոսկր չի հանդիսանում.

Ա-Սեպոսկրը

Բ-Ծոծրակոսկրը

Գ-Ճակատոսկրը

Դ-Գագաթոսկրը

289.Ո՞ր անոթն է դուրս գալիս ձախ փորոքից.

Ա-Աորտան

Բ-Թոքային զարկերակը

Գ-Վերին սիներակը

Դ-Թոքային երակը

290.Ո՞ր թաղանթն է անմիջապես պատում թոքերը.

Ա-Ընդերային պլևրան

Բ-Առպատային պլևրան

Գ-Պերիկարդը

Դ-Որովայնամիզը

291.Մարդու գլխուղեղի ո՞ր հատվածում են գտնվում անոթաշարժ և շնչառական կենտրոնները.

Ա-Երկարավուն ուղեղում

Բ-Ուղեղիկում

Գ-Մեծ կիսագնդերում

Դ-Բրտամարմնում

292.Դատաբժշկական օստեոլոգիայում կոնքի կառուցվածքային առանձնահատկություններով ամենաճշգրիտը որոշվում է դիակի՝

Ա-Սեռը

Բ-Հասակը

Գ-Ռասայական պատկանելությունը

Դ-Տարիքը

293.Եթե առաջնային դատաբժշկական փորձաքննության եզրակացությունը թերի է կամ անորոշ՝ նշանակվում է.

Ա-Լրացուցիչ փորձաքննություն

Բ-Կրկնակի փորձաքննություն

Գ-Համալիր փորձաքննություն

Դ-Հանձնաժողովային փորձաքննություն

294.Եթե փորձագետի եզրակացությունը հիմնավորված չէ, անթույլատրելի են ճանաչվել փորձաքննության ընթացքում օգտագործված ապացույցները, կամ խախտվել է փորձաքննության կատարման կարգը, ապա նշանակվում է.

Ա-Կրկնակի փորձաքննություն

Բ-Լրացուցիչ փորձաքննություն

Գ-Հանձնաժողովային փորձաքննություն

Դ-Համալիր փորձաքննություն

295.Մեկից ավելի տարբեր մասնագիտությունների փորձագետների մասնակցությամբ կատարվող փորձաքննությունը կոչվում է.

Ա-Համալիր

Բ-Հանձնաժողովային

Գ-Լրացուցիչ

Դ-Կրկնակի

296.Ո՞ր հատկանիշն է հանդիսանում առողջությանը ծանր վնասի հատկանիշ.

Ա-Հղիության վնասվածքային ընդհատումը

Բ-Առողջության տևական քայքայումը

Գ-21 օր տևողությամբ բուժումը

Դ-Ընդհանուր աշխատունակության 1/3-ից պակաս կայուն կորուստը

297.Տուժողի գլխի, պարանոցի, դեմքի, կզակի շրջանների վնասվածքների առկայության դեպքում դատաբժշկական փորձագետի իրավասությունների մեջ չի մտնում.

Ա-Անջնջելի այլանդակման պարզումը

Բ-Վնասվածքի վաղեմության որոշումը

Գ-Վնասվածքների առաջացման մեխանիզմի որոշումը

Դ-Առողջության վնասի ծանրության աստիճանի պարզումը

298.Այրվածքների ո՞ր աստիճանին է բնորոշ մաշկի վրա թափանցիկ կամ դեղնավուն հեղուկով լցված բշտերի առաջացումը.

Ա-II աստիճան

Բ-I աստիճան

Գ-III աստիճան

Դ-IV աստիճան

299.Արյան հետքերի դատակենսաբանական լաբորատոր հետազոտությամբ առաջնահերթ պարզում են.

Ա-Արյան տեսակային պատկանելությունը և խումբը

Բ-Անձի ինքնությունը

Գ-Թմրամիջոցների առկայությունը

Դ-Էթիլ սպիրտի քանակական որոշումը

300.Դիակի դատաբժշկական դիահերձումը օրենքով թույլատրվում է կատարել.

Ա-Մահից 12 ժամ անց

Բ-Մահից 6 ժամ անց

Գ-Մահից 4 ժամ անց

Դ-Մահից 8 ժամ անց

301.Կախման ժամանակ ճմլման ակոսի հատակի «պերգամենտացումը» պայմանավորված է.

Ա-Օղի մեխանիկական ճնշումից էպիդերմիսի վնասման և չորացման երևույթով

Բ-Օրգանիզմի սակավարյունությամբ

Գ-Օրգանիզմի հիպօքսիայով

Դ-Էրիթրոցիտների քայքայմամբ

302.Բարձր լարման էլեկտրական հոսանքի անցումը օրգանիզմով մահ է առաջացնում առավելապես հետևյալ մեխանիզմով.

Ա-Սրտի փորոքների ֆիբրիլյացիայի

Բ-Վնասվածքային ցնցակաթվածով

Գ-Ներքին հետարյունահոսական ցնցակաթվածով

Դ-Թոքային զարկերակի թրոմբոէմբոլիայի հետևանքով

303.Կուսաթաղանթի դատաբժշկական զննմամբ դրա պատերի բարձր էլաստիկությունը, բնական փոսությունները թույլ է տալիս.

Ա-Սեռական հարաբերության կատարում՝ հիմնականում առանց կուսաթաղանթի ամբողջականության խախտման

Բ-Որոշել տարիքը

Գ-Բացառել ցանկացած սեռական հարաբերություն

Դ-Հղիության ժամկետի որոշում

304.Ո՞ր լաբորատոր մեթոդն է ներկայումս հանդիսանում ամենաբարձր հավաստիության աստիճան ունեցող հետազոտություն անձի նույնականացման որոշման համար.

Ա-ԴՆԹ-նույնականացումը

Բ-ABO համակարգով արյան հետազոտությունը

Գ-Տրիխոսկոպիկ հետազոտությունը

Դ-Դատասպեկտոգրաֆիկ մեթոդը

Սկզբնաղբյուրներ՝

1. Դատական բժշկություն Շ.Ա.Վարդանյան Կ.Լ.Նազարեթյան 1995թ.
2. Դատական բժշկություն Շ.Ա.Վարդանյան, 2017թ.
3. Судебная медицина А.А.Матышева, проф. А.Р.Деньковский
4. «Черепно-мозговая травма: Судебно-медицинские аспекты» Попов В.Л. Л.: Медицина, 1988
5. «Руководство по судебно-медицинской экспертизе трупа» А.А.Солохин, Ю.А.Солохин, Москва, 1997
6. «Построение судебно-медицинского диагноза, клинико-анатомического эпикриза и алгоритмы экспертной диагностики повреждений» - (методическое пособие), Барнаул, 2003
7. «Судебная медицина» - Учебник, В.Л.Попов, А.В.Ковалев, О.Д.Ягмуров, И.А.Толмачев, Санкт-Петербург, 2016
8. «Руководство по судебно-медицинской экспертизе» В.В. Хохлов, 2003
9. HYPERLINK "https://archive.org/details/1949_20220222" Судебная Медицина. М. И. Авдеев, 1949